



891.99
U-27

12 MAR 2011



891.99
U-27 ^պ

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

Յ Ե Ր Ե Ք Յ Ե Ր Գ

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ՊՈԵՄ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն ● 1 9 3 6

29.07.2013

53878

Նվեր Հայաստանի խորհրդայնացման
տասնհինգերորդ տարեդարձին

Պատ. խմբ. [redacted]
Տեխ. խմբ. [redacted]
Սրբագրիչ Հ. Մանուկյան

Պատրաստի ապարան
Գլավիտի լիազոր Հ. Մ. 1099, Գտավեր 613
Հրատ. 3716, Տիրած 3000



1876
38

ТЕГАМ САРЬЯН
ТРИ ПЕСНИ
ГИЗ ССР Армении, Эривань 1936

Ա. Ռ. Ա. Զ. Ի. Ն. Յ. Ե. Բ. Գ.

Ա. Պ. Ս. Ե. Ե. Բ.

Նախան վարագույրը բացվելը բեմի առաջին պլանի վրա յերեվում
են վեց շեփորահարներ, վարակցից յերեքը կանգնում են բեմի մի
կողմի վրա, յերեքը մյուս յեվ շեփորում են: Ապա գալիս Ե. Դիֆտորը

Դ. Ի. Բ. Տ. Ո. Բ.

Յեւ լսեցի ուրախ փողերի զիւ ձայներ,
Յեվ լսեցի կանչեր հաղթանակի,
Յեվ հիշեցի հանկարծ մեր հին յերկիրն ավեր,
Ու խնդրեցի վռչ վռք չնվազի:
Յեւ հիշեցի հանկարծ մեր հին յերկիրն ավեր,
Ու լցվեց իմ սիրտը տխրությամբ խոր,
Ուր վոր կյանքը դաժան մի դժոխք էր դառել,
Ուր վրան էր խփել մահն ահավոր:
Յեվ ուր հազարներով և մերկ և սովահար
Մահն էր հնձում կարծես խոտի նման,

Ու դիերը բոլոր, դիերը անհամար
 Լցվում եյին մեկտեղ մի դերեղման:
 Յես լսեցի ուրախ փողերի զիւ ձայներ,
 Յեւ լսեցի կանչեր հաղթանակի,
 Յեւ հիշեցի հանկարծ մեր հին յերկիրն ավեր,
 Ու խնդրեցի վոչ վոք չնվագի:
 Ու թող բացվի ձեր դեմ դռները անցյալի,
 Թող դառնա պատմության անիւլը հին,
 Աչքերիս դեմ մուսլ պատկերներ են գալիս,
 Մեր այս հանդիսավոր, պայծառ որին:
 Ահա քսան թվի «անկախ» Հայաստանում,
 Արյունոտ կռիվներ ազգամիջյան,
 Վորից դամբանների հողն եր հարստանում,
 Ու մահն եր ծիծաղում չար ու դաժան:
 Ահա վորը ու սոված մանուկներ անհամար,
 Ու գաղթի շարաններ ձգված հեռու,
 Ահա հենակավոր մարդիկ բազմահազար.
 Վորոնք դեզերում են փողոցներում:
 Յեւ թող բացվի ձեր դեմ դռները անցյալի,
 Թող դառնա պատմության անիւլը հին,
 Աչքերիս դեմ մուսլ պատկերներ են գալիս,
 Մեր այս հանդիսավոր, պայծառ որին:

Շեփորահարներ գնում են: Դիտոր բազում է բեմի մի կողմի վրա:
 Վարագույր բացվում է

Խրճիթ

Մի քախի վրա պառկած է Սուրենը. նա վիրավոր է. կողքին հուսա-
 նաս վիճակում նսած է կինը, վորի մոտ նսած է 5-6 տարեկան յե-
 րեխան՝ Արամը: Կրակի վրա մի կարսու

ՍՈՒՐԵՆ

ՏԳալով

Աշխատիք, քրտնիր, վոչ հանգիստ՝ վոչ քուն,
 Յեւ հնոցների կրակների դեմ,
 Յեւ խավար, խոնավ պղնձի հանքում...
 Վերջն ել զինվոր ես... կռիվ ե արդեն...
 Ախ, ապրուստ չի սա, գեհենի կրակ...
 Վերավոր, հիվանդ, այս սև հարկի տակ...

ՍՐԱՄ

Հաց, հաց եմ ուզում,
 Սոված եմ, նանի:

ՄԱՅՐԸ

Քիչ ել կաց, նանին
 Քո չարը տանի:
 Տես, արդեն յեփում
 Քըլթ-քըլթում է նա,
 Շուտով իմ բալան
 Լավ կը կշտանա:

ՍՈՒՐԵՆ

Մեռնում եմ, ախր կյանք չեմ տեսել չես,
 Ամբողջ իմ կյանքում չեղել եմ կարոտ,
 Ախ միթե այս է բաժին ընկել մեզ,
 Ամոթ քեզ, Աստված, ամոթ քեզ, ամոթ...
 Կովիր, և ինչո՞ւ... վոր լմվ ամբանա,
 Ու ամո՞ւր սեղմի քո կողորդը նա:

ՄԱՅՐԸ

Մի խոսի աչքակես, ու հանգիստ մնա,
Նեղ որ ե, կանցնի, լավ որ կը տեսնես,
Գուցե մեզ վրա դայրացել ե նա,
Աստված, բարի հայր, գթա, խղճա մեզ.
Աստված, ահա չես քո վոտներն ընկած
Աղոթք եմ անում, մի կործանիր մեզ,
Գթառատ յեղիք, յեղիք վողորմած,
Յերեսս վոտքիդ տակ եմ դրել յես:
Դու ել աղոթիր, իմ անմեղ բալա,
Ասա, ձեռներդ դեպ չերկինք պարզած.
Տեր, բարի աչքով նայիր մեզ վրա,
Փրկիր հայրիկիս, ով բարի աստված:

ԱՐԱՄ

Տեր, բարի աչքով նայիր մեզ վրա,
Փրկիր հայրիկիս, ով բարի աստված:

ՍՈՒՐԵՆ

Վոչ, մի աղոթիր, նա չի իմանում,
Բոլոր հայրերը, զավակ իմ թշվառ,
Պետք ե կուրծք դեմ տան ու թափեն արյուն
Իբենց իսկական փրկության համար:

ԴԻՔՏՈՐ

Իսկ դրսում վորսի բարակի նման,
Մի դաշնակ սպա, չերկու զինվորներ,

Տնետուն ընկած փնտրում են նրան,
Փնտրում են նրան, վորոնում են դեռ:
Փնտրում են նրան դասալիք վորակես,
Իբբե դավաճան չերկրի ու ցեղի,
Վոր թողած կովի դաշտը կնոջ պես
Փախել ու գյուղ ե չեկել անտեղի:

ԱՐԱՄ

Հաց, հաց եմ ուզում,
Սոված եմ նանի...

ՄԱՅՐԸ

Քիչ ել կաց, նանին
Քո չաբը տանի,
Տես թե քեզ համար
Ի՞նչ ճաշ եմ չեփում.
Տես թե ինչպես ե յեփում,
Քըլթըրթում.
Թե վոր մի քիչ ել
Սպասի, մնա,
Շուտով իմ բալան
Լավ կը կշտանա:

Դուռն ամուր բաղխում են, կինը ստրափած մտնում
Ե դռն ու լուռ սպասում

ՍՈՒՐԵՆ

Յես գիտելի այդ. գիտելի կզան...

ՄԱՅՐԸ

Սուս...

ՍՊԱ

Ե՛յ, ով կա ալդտեղ, բաց արեք դուռը,
Քանի չեմ ջարդել, չեմ քաշել սուրը:

Լոուրյուն: Դուռն ավելի կասաղի կերպով են բաղխում

ՄԱՅՐԸ

Ինչ անեմ, ասա, վողորմած աստված:

ՍՈՒՐԵՆ

Գիտեմ, կջարդեն, մեկ է, դուռը բաց:

Կի՛նր բացում ե դուռը, նես են մեցում սպան, վարդանը
յեվ մի այլ զինվոր

ՍՊԱ

Մոտենում ե Սուրենին

Յեվ դու քեզ զինվոր, մարդ ես համարում,
Դու լիբր, դավաճան մեք հալբենիքի,
Մեր հայրենիքը ձեռից ե գնում,
Իսկ դու պառկել ես քո կնոջ կողքին:

Զինվորներին

Վեր հանեք դրան ու տաբեք շտաբ,
Այնտեղ նա մեզ դեռ պատասխան կտա,
Վեր կաց, սրիկա, դե վեր կաց շտապ,
Թե չե մարակը յերեսիդ կգա:

Զինվորները քառ եմ քալիս Սուրենին

ՍՈՒՐԵՆ

Մեռնում եմ, թողեք հանգիստ մահանամ,
Յերբխայիս մոտ, իմ ընտանիքում...

ձյալով ընկնում ե սպայի վոսեքը, յերեսան լաց ե լինում

ՄԱՅՐԸ

Ա՛յ, պարոն սպա, վոտքիդ հող դառնամ,
Խղճացեք, լեթե դուլթ կա ձեր սրտում:

ՍՊԱ

Տանել, ասում եմ ձեզ, անմիջապես:

ՍՈՒՐԵՆ

Մեռնում եմ, աման... մահ դու փրկիր ինձ:

ՄԱՅՐԸ

Սպայի վոսեքին փաթարված

Քո վոտքի հողն եմ, տե՛ս, քո շունն եմ յես,
Յերբ առողջանա կճամբեմ նորից:

ՍՊԱ

Տանել, ասում եմ ձեզ, անմիջապես:

Զինվորները դուրս են քանում Սուրենին քառ քալով:
Նրան հետևում ե սպան

ՄԱՅՐԸ

Սպայի յեսեվից, քառ վոսեքն ընկած աղաչում ե

Աղաչում եմ քեզ, խղճա իմ մահկան,
Մի թողնիր նրան վորք ու անպաշտպան

Սպան առանց ուշադրություն դարձնելու զնում ե:
Կիմը մի պահ գլուխը բարձրացնում ե

Աստված, դու արա դատ ու դատաստան:

Պաուզա

Վնչ, ինքս կանեմ դատ ու դատաստան:

Դռան մոտից բարձրանում, արագ վազում ե ներս, վերցնում ե կացիներ յեվ դուրս նետում: Քիչ անց դրսում լսվում ե ասեմանակի կրակոց յեվ կանացի սուր ճիչ: Արամը լաց ե լինում, ապա յերեւալով մոտենում ե կրակի վրա հլիքացող կաքայի, վերցնում ե նրա վրա դրված գզալը յեվ բանալով կաքայի բերանը, փորձում ե գզալով նաե հանել: Հանում ե մի փառ

ԱՐԱՄ

Ե՛, քան ե դարձել մեր ճաշը, նանի...

ԴԻՔՏՈՐ

Ո, խեղճ յերեխա, ինչ իմանայիր,
Վոր քար ե խաշում մայրդ քեզ համար,
Վոր դու ուտելու հույս ունենայիր,
Հույսը քեզ դնես ապրելու ուժ տար:
Յեվ այժմ հուսես վոչ հույս, վոչ նանի,
Իսկ քո հայրիկին շտաբը տաքավ,
Ախ, կյանքը քեզ հետ դեռ ինչեր կանի,
Քեզ, խեղճ յերեխա, դեռ կյանքի ծարավ:
Յեվ մենակ չես դու հազարներ քեզ պես,
Անոթի, աղյուր, վորը, անապաստան,
Վորոնք աշխարհում ծնվել են կարծես
Մեռնելու աշխան ճանճերի նման:

Բ. ՊԱՏԿԵՐ

Խրենիք, վորը ներկայացնում ե իրենից ռաբբ:
Սեղանի առաջ նստած ե ռաբբի պեսը: Նրա դեմ գլուղի էյոխվան

ՇԱՄԻ ՊԵՏ

Այդպես: Մեր զորքին հարկավոր ե հաց,
Հանուն մեր ազգի ե հայրենիքի,
Դյուղացիներին ասա՝ առանց լաց
Հաց տան մեր հզոր քաջարի զորքին,
Թե չե կը քաջենք սուր ու հրացան
Ու ամբողջ դյուղը կանենք ցիր ու ցան:

ՔՅՈՆՎԱ

Գիտեմ, իհարկե, վոր հաց կա դյուղում,
Արդար ես խոսում, դու շտաբի պետ,
Բայց խնդրում եմ քեզ, ձերդ մեծություն,
Մի քանի զինվոր դնեք դուր ինձ հետ:

ՇՏԱՌԻ ՊԵՏ

Մի քանի զինվոր: Ե՛յ, հիվ կա այդտեղ:

Մի զինվոր Երս և մեկուս

ԶԻՆՎՈՐ

Հրամայեցեք, պարոն գնդապետ:

ՇՏԱՌԻ ՊԵՏ

Ասա, թող յերեք զինվոր վեր կենան
Ու քյոխվայի հետ գյուղ հացի գնան:

ԶԻՆՎՈՐ

Լսում եմ յես ձեզ պարոն գնդապետ:
Գնում ե

ՇՏԱՌԻ ՊԵՏ

Իսկ դու խիղճ, հողի մեկ կողմը գցի,
Լսում ես, զորքը կարոտ ե հացի...

ՔՅՈՒՎԱ

Լսում եմ յես ձեզ, պարոն գնդապետ,
Աստված հայ զորքին ուժ տա առհավետ:

Գնում ե: Ներս և մեկուս սպան

ՍՊԱ

Պարոն գնդապետ, մենք դտանք նրան,
Ճակատից փախած այն դասալիքին,

Յերկու զինվորներ հսկելով վրան
Սպասում են ձեզ շտաբի դռան:

ՇՏԱՌԻ ՊԵՏ

Ասա ներս բերեն այդ սրիկային:

Սպան դուրս ե գնում ու փչ հետ վերադառնում ե, Երս յեսկից
մի զինվոր Երս և բերում Սուրենից, Եսաբի պեք մի պահ լուռ Եսա-
յում ե Երան

Եհ, իսկ ինչպես ես զգում քեզ հիմա,
Լավ ե չե՞ տանը, կոշիկ կողքին,
Իսկ ուրիշները՝ հազար քեզ նման
Կյանքները դոհեն քո անպետք կյանքին:

ՍՈՒՐԵՆ

Վերավոր եյի, շատ ծանր եյի յես...
Պարոն գնդապետ, մի սպանիր ինձ,
Յերեխաս այնտեղ, անոգ թռչնի պես,
Մենակ անպաշտպան մեռնում ե սովից:
Մայր ել չունի, վոր պաշտպանի նրան,
Մորը սպանեց մեր այս քաջ սպան.
Ա՛խ, հասկացեք ինձ, ձերդ ազնվություն,
Յես թույլ եմ, չունեմ ուժ ու զորություն:

ՇՏԱՌԻ ՊԵՏ

ԶԵս ուզում կովել, դու լիբը, դավաճան,

Սկսում ե մտակել

Դե առ քեզ, առ քեզ, առ քեզ սրիկա,
Բանտը դրեցեք թող մնա այնքան,
Մինչև վոր խելքը գլուխը կդա:

Յերեք յերդ—2



ՍՈՒՐԵՆ

Խեղճ իմ յերեխա... մեռնում եմ, աման...
Մնացիր դու վորը, վորը ու անպաշտպան:

ՇՏԱՔԻ ՊԵՏ

Մի վռնա ալստեղ:

ԶԻՆՎՈՐԻՆ

Դուրս տար դու սրան,
Դիցիր մարադը ու հսկիր վրան:

ԶԻՆՎՈՐ

Պարոն գնդապետ, լսում եմ յես ձեզ:

Սուրենը սնում է գեսնին քնկած

ՍՈՒՐԵՆ

Միթե մարդու հետ կվարվեն ալսպես:

ՇՏԱՔԻ ՊԵՏ

Սպային

Իսկ դու, սիրելիս, գլուղամեջ գնա,
Առ մի խումբ գինվոր ու շրջի գլուղում,
Յեվ յեթե գլուղում աղմուկ բարձրանա,
Ճնշիր ամեն մի բողոք ու հուզում:
Գիտեմ, հեշտ չեն տա պաշարը հացի,
Յերկինք կհասնի աղմուկը լացի:

ՍՊԱ

Լսում եմ, ձերդ մեծապատվություն,
Կճնշեմ բողոք ու խռովություն.
Իսկ յեթե մեկը գենք գործի գնի,
Նրա բաժինն ել մահը կլինի:

ՇՏԱՔԻ ՊԵՏ

Այդպես ել կանես: Ազատ ես հիմա:

Սպան գնում է: Պահակը բերում է մի քուղր. Եսաբի պեսը կարդում
յեվ դուրս է գնում

ՎԱՐԴԱՆ

Սուրենը գեսն, վոր իրեն վաչ վոք չի լսում

Լսիր ինձ, Սուրեն, դու մի վախենա,
Մարազում քեզ պես քսան գինվոր կա,
Մեր բոլջեկյան կենտրոնից շուտով
Կուլի դուրս գալու հրաման կը գա:
Միանալու յենք մենք կարմիր գործին...

ՍՈՒՐԵՆ

Իսկ գենք, չե՞ վոր մեզ հարկավոր է գենք:

ՎԱՐԴԱՆ

Մարազում ունենք գենք, ռազմամթերք:

Այդ միջոցին Եսաբի պեսը ներս է գալիս: Սուրենը շարունակում է
սնալ: Վեր է կենում

ՍՈՒՐԵՆ

ՈՖ, ոՖ, մեռնում եմ:

ՇՏԱՐԻ ՊԵՏ

Այստեղ եք դուք գեռ:

ՎԱՐԴԱՆ

Պարոն գնդապետ, տանում եմ արդեն:

Վարդանը տանում է Սուրենին: Բակում լսվում է աղմուկ: Շաբաթ
պետք դուրս ե գնում: Բեմը մթնում է:

ԴԻՔՏՈՐ

Մտան հյուսիսից հյուսիս, մտան տնից տուն
Խելելու վերջին պատառը հացի,
Ու սովը պղծում շրջում էր անքուն,
Ու յերկինք հասավ աղմուկը լացի:
Իսկ հողի ջահել մշակներն ամեն,
Արյունոտ կովի ճակատներն ընկած,
Կովում ելին դեռ բորբիկ ու անգին,
Կովում ելին դեռ տկլոր ու սոված:
Յեվ մեռնում եյին՝ ով գիտե թե ուր,
Վեր խոր ձորի մեջ՝ կամ վոր քարի տակ,
Անհայտ անանում մահանում անյուր,
Սրտերի վրա մահառիթ գնդակ:
Ո՛հ, խեղճ ջահելներ, գիտեյի՞ք արդյոք,
Վոր արյունաբերու տերերը ձեր հին,
Ձեր մանուկներին կթողնեն անող,
Կթողնեն սոված, կհանձնեն մահին:

Գ. ՊԱՏԿԵՐ

Շտաբի բակը

Իյուդի կանայք ու ծերունիները հարձակվում են Շաբաթի վրա: Ձին-
վորները քույլ չեն տալիս նրանց շարժվել առաջ: Պատեցամբում կանգ-
նած է Շաբաթի պետք յեվ զինվորներ

Ա. ԿԻՆ

Վարդանը մեր յերեսխաներին,
Աշխատող մի ձեռք չթողի՞ր գյուղում:

Բ. ԿԻՆ

Յետ բերեցեք մեր ամուսիններին,
Յետ բերեցեք, մենք կռիվ չենք ուղում:

ՇՏԱՐԻ ՊԵՏ

Կրակ բաց արեք, կոտորեք գնան,
Այս խենթ լրբերին ազգի դավաճան:

Բ. ԿԻՆ

Յերեսխաներս կոտորվե՞ն սոված,
Այ կրակ թափի ձեր գլխին աստված:

ՄԻ ՀԵՆԱԿԱՎՈՐ

Հողագործ եյի, կտրեցիք հողից,
Յես վոտք ունեցի, զրկեցիք վոտից:

ՇՏԱՐԻ ՊԵՏ

Զիւմպորներին

Կրակ բաց արեք, ասում եմ յես ձեզ:

Դ. ԿԻՆ

Մեկ ե, վոչ մի բուռ հաց չենք տա մենք քեզ:

Բագմուքունը պատկուով առաջ ե գալիս մի կույր, պատկուով ձե-
րունի. Արամի առաջնորդությամբ

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Ո՞վ վորբացրեց այս յերեսային...
Ել բավական ե խաղաք դուք մեզ հետ,
Ի՞նչ ե, վոչ զյո՞ւն եք ուղում տալ մահին...
Ասա, դահիճ ես, թե շտաբի պետ:

ՇՏԱՐԻ ՊԵՏ

Ձայնդ կտրի դու, այ քաֆթառած շուն,
Թե չե՞ մաուզերը դանդիդ եմ քաշում:

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Հեշտ ե սպանել մի կույր ծերունու —
Այգալիսի գործեր ստորն ե անում,

Քաջը թույլ չի տա, վոր գյուղը խաղառ
Սովի մատնվի անտեր ու թշվառ,
Կտրի պատառը վորբի բերանի:
Այ մարդ անունը քեզ հաբամ լինի...

ՇՏԱՐԻ ՊԵՏ

Դե առ, քաֆթառ շուն, վոր շատ ես հաջում:

Ասեմանակը քառում ե վոր խփի. բարձրանում ե կամաց ու ծերունի-
ների վայնասունը: Բոլորք վրա յեն քափում ու քույլ չեն քալիս
կրակել

ՁԱՅՆԵՐ

— Բռնեք, մի թողեք...
— Բռնեցեք նրան...
— Լավ որ չտեսնես...
— Լուսըդ խավարի...
— Դունեղուռ ընկնես դու նրա նման...
— Այ գնդակի դաս...
— Պապի, դեսն արի...

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Վոչ, կույր ծերունին մահից վախ չունի,
Թողեք խփի նա, թողեք, միք բռնի...
Տեսեք, դոչաղ ե, քաջ ե, խոսք չկա...
Թյուճ էր նամուսին, ազգի դահիճներ,
Հաստատ չի յեղել վոչ մի թագ ու գահ,
Ձեր կործանումն ել վաղ թե ուշ կգա:

ՇՏԱՐԻ ՊԵՏ

Գաղազած

Կտրեցեք ձայնը ալդ քաֆթառած շան:

Ձինվորները կռակում են բազմության վրա: Մի ֆանիսն ընկնում են
Ապա սիրում է ֆաւ լոուրյուն

Իսկ հացը հիմա սուս ու փուս կտան:

Դ. ՊԱՏԿԵՐ

ԴԻՔՏՈՐ

Յեւ մի առավոտ, վաղ այգաբացին,
Յերբ մուլն հաղիւ կը բաժանվում լույսից,
Գյուղացիք գաղթի ճամբան բռնեցին:
Յելան շարեշար գլխահակ, տրտում,
Վորպես դամբանից յելած դիակներ
Շարժվեցին առաջ: Ու նրանց սրտում
Մղձավանջի պես գիշերն եր նստել:
Նրանց ուսերին ծանր հողաի պես
Մանուկներն եյին լայ լինում սոված,
Նրանց յետեից կարծես հողմի պես
Մահն եր արշավում իր թևերը բաց:

Փրար յեսեվից Եարֆով անցնում են գաղբոյ գյուղացիք: Վաճանք յե-
րեխաներ գրկած, վաճանք Եալակած, գնում են կանայք, ծերունիներ,
հեռակներով մարդիկ յեւ կույր ծերունիք Արամի առաջնորդությամբ:
Այդ ամբողջի ընթացքում հնչում է Դիֆթարի ձայնը

Յեւ զնոսմ եյին՝ հօր, չգիտեյին,
 Դեպի մահ արդցոք, դեպ ազատութիւն,
 Թե՛ մուրացիկի դառն ու սև ուղին,
 Ի՞նչ կվիճակվեր նրանց այս կյանքում:
 Մռայլ եր նայում նրանց ապագան,
 Ու դառնութիւն եր կաթում աչքերից,
 Հիշում են մարդկանց, վոր հիմի չկան,
 Բայց ձայն են տալիս կարծես թե հեռվից:
 Մնաս բարով, գլուղ, մեր հին որորան,
 Մենք թողնում ենք քեզ, գնում ենք հեռու,
 Բայց քո հողի մեջ սիրելիներ կան,
 Վորոնց շիրիմը ել չենք տեսնելու:
 Մնաս բարով, գլուղ, մեր հին որորան,
 Շատ քրտինք թափինք քո սև հողերում,
 Բայց սովը միշտ ել կանգնեց մեր դռան,
 Ու մահը սուլեց քո խոր ձորերում:
 Մնաս բարով, գլուղ, թողնում ենք մենք քեզ,
 Գնում ենք հեռու մեր բախտին հլու,
 Աշնանը չվող թռչունների պես,
 Չգիտենք մեզնից ով ե յետ դալու:
 Յեւ զնոսմ եյին: Յեւ լիքն եր նրանց
 Սրտերը վշտի դառն արցունքներով,
 Շարեշար, անխոս քալելով կամաց
 Վորտապառույտ ճամբի յերկայնքով:
 Նրանց յետևում գլուղն եր ամայի,
 Վոր գառան նման նայում եր տրտում,
 Ու թվում եր, թե անա կը մայի,
 Կարծես կուտակված լաց ունեւ սրտում:

Ու թվում եր թե՛ կանչում են նրանց
 Գլուղի հյուղերը, խրճիթները հին,
 Ու թվում եր թե՛ մայում են կամաց
 Անցած հոտերը հին արտաներին:

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Մնաս բարով, գլուղ, իմ հին որորան,
 Կորցրի քո ծոցում լույսն իմ բերքի,
 Զուլդ գավակներս քո ծոցում մեռան,
 Զուլդ գավակներս... լույսն իմ աչքերի...

Բեմը մթնում է

Ե. ՊԱՏԿԵՐ

ԴԻՔՏՈՐ

Ամայի գլուղում տխուր, անկենդան,
 Ճամբեքից հեռու մնաց մի մարագ,
 Կարծես մոլորված խեղճ ուլի նման,
 Վոր դեգերում ե բաց չերկնքի տակ:
 Ու այդ մարագում մենակ, հեռավոր,
 Քսան զինվորներ գունատ ու նիհար,
 Քնում, զարթնում են ամեն առավոտ,
 Նոր արևածագ տեսնելու համար:
 Իբրև դասալիք, դավաճան ազգի,
 Դաշնակ պետերը բռնել են նրանց,
 Դցել են այստեղ, մատնել տանջանքի,
 Այդ մարագի մեջ խոնավ, անթափանց,
 Բայց սպասում են նրանք հավատով,
 Կարծես տեսնում են մի վառ ապագա,
 Վոր արևածագ կլինի շուտով
 Վոր նոր մարտերի մի նոր որ կգա:

Ընդարձակ մի մարագ. վոթեղ բացարկված են դաճակցական բա-
 ցակի խսան դասալիք զինվորները, վորոնց մեջ ե յեվ Սուրենը: Դիմա-
 ցից յերեվում ե մարագի փոքրիկ ճաղապատ պատուհանը: Մի մասը
 փնած են, իսկ վոմանք նսած են փառերի վրա բնի կենցաղում: Եր-
 րանց մեջ ե յեվ Սուրենը վորը մեղմ յերգում ե

Միրտս տխուր ամպի նման,
 Միտքս վոլոր ճամբի նման,
 Դիտեմ պիտի հողմերի դեմ
 Հանգչեմ վառվող լամպի նման:

Ա. ԶԻՆՎՈՐ

Այսոր գլուղից ձայն չլսվեց կարծես,

Բ. ԶԻՆՎՈՐ

Յեվ յերդիկներից ծուխ չբարձրացավ:

ԿՈՐՑՈՒՆ

Այսոր մի կուշտ հաց չկերանք կարծես
 Յեվ բերաններս բան չհասկացավ...

ՍԵՐՈՐ

Միմասուլթյունդ կրճատիր մի քեզ:

ԿՈՐՑՈՒՆ

Հարձակվելով

Քիմիկոսուլթյուն... Խնչ ասացիր, Խնչ:

ՍՈՒՐԵՆ

Խնչ յեղավ արդյոք յերեխաս, տեսնես,
 Ապրում ե, թե նա սովից մահացավ:

ՌՈՒՐԵՆ

Իսկ վարդանը մեզ նոր լուր չի բերում,
Տեսնես թե ինչ է կատարվում յերկրում:

Բ. ԶԻՆՎՈՐ

Ինչ պիտի լինի, կռիվ է, ելի:

Ծայր է առնում յերգը

Միբոս տխուր ամպի նման,
Միտքս վոլոր ճամբի նման,
Գիտեմ պիտի հողմերի դեմ
Հանգչեմ վառվող լամպի նման:

ՌՈՒՐԵՆ

Հաղութունը լաւած

Տղերք, մի բոպե լռեցեք, հապա:

Լսվում է դսից սուրց: Զինվորները իրար յերես են նայում

ՍՈՒՐԵՆ

Ազդանշան եր:

Ա. ԶԻՆՎՈՐ

Այո, ճիշտ այդպես:

ՌՈՒՐԵՆ

Վազում է դեպի պատուհանը: Այդ միջոցին պատուհանից բնկնում է
մի նամակ

Ահա և նամակ:

Նայում է պատուհանից

Իսկ վոչ վոք չկա:

ՍՈՒՐԵՆ

Նամակը կարդա:

Բոլորը հավաքվում են Ռուբենի շուրջը

ՌՈՒՐԵՆ

Սուրենից

Առ ինքդ կարդա, աչքս չի ջոկում:

ՍՈՒՐԵՆ

Առնում է յեվ սկսում է կարդալ

Կենտրոնից արդեն չեկավ սուրհանդակ
Այսոր դուրս կգանք, մնացեք արթուն.
Հավաքվելու յենք հենց այս գլուղի տակ,
Պահպանեք այդտեղ խիստ զգուշություն:
Իսկ ձեզ անհրաժեշտ ղենքերի մասին
Ռուբենը գիտե, ինքը ձեզ կասի:
Պահակին, վոքը կանգնած է դռան,
Մերոնք կխփեն դուռը կը բանան:
Հետո կլսեք կրակոցի ձայն,
Յեվ այդ կլինի ձեզ ազդանշան:

Նամակի բերեցումից հետո, վազվազած

Բացվում է նոր կյանք. բացվում է նոր ուր...

ՌՈՒՐԵՆ

Դե, տղերք, արդեն պատրաստվեք հիմա:

Մոտենալով քնածներին

Ե, ինչ եք քնել մեռելի նման:

Քնած զինվորները արքնանում են

ՍՈՒՐԵՆ

Շատ չի մնացել կարծեմ ժամանակ,
Պետք է հենց հիմա պատրաստվել արագ:

Ա. ԶԻՆՎՈՐ

Այո, գիշերը արդեն յեղավ կես,
Պետք է պատրաստվել հենց անմիջապես:

ՍՈՒՐԵՆ

Իսկ առավոտը կլինի պայծառ,
Իսկ առավոտը կշառագունի,
Ու արեգակը անհունի մեջ վառ,
Կշողշողա մեղ փայլով արյունի:

Բ. ԶԻՆՎՈՐ

Վոր նոր է զարթնել քնից

Այդ ինչ է յեղել, ինչ եք խառնված:

ԿՈՐՑՈՒՆ

Կռվի յենք գնում, հազնվիր, քնած:

Բոլորը հագնվում են, բացի Սերգից, վոր մտմոլոր շարունակ
երջում է

ՍԵՐՈՐ

Կողմ

Իսկ ինձ այլևս ել գործ չի մնում
Ինձ հարկավոր է շուտ լուր տալ շտաբ:

Զինվորներից մի խումբ հագնվելով յերգում են

Բացվիր առավոտ, բացվիր արևով,
Աշխարհի վրա, սրտերի վրա,
Բացվիր առավոտ, զվարթ բարևով,
Քո վառ հայացքին կարոտ ենք ահա:

Լույս տուր և հանդին, և բանտին խավար,
Ու թող կյանք առնեն և դաշտ և արոտ,
Մեր կյանքի համար, մեր բախտի համար,
Բացվիր առավոտ, բացվիր առավոտ:

ՍՈՒՐԵՆ

Բացվիր առավոտ, բացվիր առավոտ:

ԿՈՐՑՈՒՆ

Հագնվելով, իբր քե ինձ իրեն

Այ սա լավ յերգ է, ինչ կա ասելու,
Իմ առավոտը յերբ է բացվելու:

Կմեռնեմ մի ուր, հոգիս կգնա,
Աստծու սեղանի առջ կը կանգնի:
Եհ, — կասի աստված, — գաղտնիք չմնա,
Քո կյանքում, ասա, խմբի ես գինի,

— Խմել եմ — կասեմ, կովել ես — կասի
— Կովել եմ — կասեմ, կուտակցակմն ես,
Այո, բուշեիկ. աղջիկ սիրել ես,
Ձեմ սիրել կասեմ — դե տարեք սրան:
Կասի Գաբրելին, դժոխքը զցեք,
Ու են ժամանակ իմ որը լացեք:

Այս բոլորի ընթացում վոման լուս ժպտում են, վոման ծիծաղում

ՍՈՒՐԵՆ

Սերոբին

Իսկ դու աղափնյակ, ինչո՞ւ չես հազնում:

ՍԵՐՈՐ

Դեռ ժամանակ կա, ի՞նչ եք շտապում,

ՌՈՒՐԵՆ

Ժամանակ չկա, ասում եմ հագիր:

Սուրենին կամաց

Պահպանեք աղտեղ խիստ զգուշություն,
Այդպես եր գրած կարծեմ նամակում:

ՍՈՒՐԵՆ

Ռուբենին առանձին

Յես ել դրանից վատ հոտ եմ առնում,
Պետք է հետեւեմ, թե ինչ է անում:

Բ. ԶԻՆՎՈՐ

Հագնված կանգնում է Ռուբենի դեմ

Դե, զենք եմ ուղղում հիմա քեզանից:

Ռուբենը մոտենում է բեմի առաջին պլանին, դեն է գցում այնտեղ
յեղած քարը ու բաց անում մի դուռ, իջնում ներքեղ

ՌՈՒՐԵՆ

Դե, ի՞նչքա՞յստեղ ու առեք զենքեր:

Բոլոր Ռուբենի յետվից իջնում են փոսը: Մնում է միայն Սերոբը:
Փոսի միջից նրան հետ եկում է Սուրենը

ՍԵՐՈՐ

Ահա, ամենից հարմար ժամանակ,
Ինձ հարկավոր է դուրս պրծնել արագ:

Մարագը լավ զննելուց հետո մոտենում է դռան ու բաղխում

Լսիր, դուռը բաց, անհրաժեշտ է այդ:

Լսվում է դռան բանալիի զնգոցը, բայց մինչեւ դռան բացվելը դր-
սից լսվում է կրակոց, ապա պահակի ճիչ

ՍՈՒՐԵՆ

Վազում բռնում է նրան, բոլոր զինված դուռն են բաղխում

Կաց: Աղափնյակն ուր էս շտապում,
Ձըլնի՞ր գործ ունես այնտեղ, շտաբում:

Ներս է մտնում Վարդանը

ՍԵՐՈՐ

Վո... վոչինչ... ինչ գործ, վոչ մի գործ չունես:

ՉԱՅՆԵՐ

- Վարդանը յեկավ.
- Վարդանը ահա.
- Ի՛նչ լուր կա դրսից:

ՎԱՐԴԱՆ

Բարե ընկերներ,
Յերեանի տակ կռիվ ե ահեղ,
Բանվորութունը կռվում ե հիմի.
Պետք ե որ առաջ մենք հասնենք այնտեղ,
Ազդանշանը շուտով կլինի:
Դե, իսկ դուք այստեղ պատրաստ եք, տղերք:

ԿՈՐՑՈՒՆ

Ցույց տալով Սերոբին

Այ, սա յեր պատրաստ: Փախչել եր ուզում:

ՌՈՒԲԵՆ

Դու ուզում ելիր, վոր մատնեյ՞ր մեզ,
Այդպես, դու մեզ մոտ յեղել ես լրտէս:

ՎԱՐԴԱՆ

Լսել եմ արդեն այդ քաջի մասին:

Ա. ԶԻՆՎՈՐ

Անամոթ, ստոր:

Բ. ԶԻՆՎՈՐ

Ինձ տվեք դրան:

ՌՈՒԲԵՆ

Քայց ուշ ե արդեն, թողեք դա մնա:
Մեզ մնացել ե շատ քիչ ժամանակ:

Վարդանը դուրս ե գալիս, նրա յետևից մեկ-մեկ դուրս են գալիս
գինիւրները

ՌՈՒԲԵՆ

Սերոբին

Իսկ դու ազամիլակ, դեռ մնա այստեղ:

Դցում եմ ներհանարկը

ԿՈՐՑՈՒՆ

Սերոբին

Քիմիկոսութունդ կըճատի մի քիչ:

Վստում եմ կրակոցներ

ՎԱՐԴԱՆ

Դե, շտապեցեք, շարժվեցեք արագ:

Գոյուն իրար յետևից գնում են

Կորյուներ դաճեցական զինվորին առաջը գցած բերում է վաճապեթի
մոտ: Նա ծանր վիրավորված է, հազիվ է ֆայլում

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԶԻՆՎՈՐ

Վաճապեթին

Դաշնակցական զորքն ուղղում է, վոր դա,
Բռնի թիկունքը ու ձեզ վրա տա.
Յես հազիվ հասա... սակայն ծանր եմ յես...
Ող չկա... ափսոս... մեռնում եմ կարծես...

Ընկնում է

ՎԱՇՏԱՊԵՏ

Ափսոս... մեռնիվ նա: Ուժ չկար վրան:

Կռանում ականջ է դնում սրին: Ապա Կորյունին

Մեռավ: Այդ դու յես գնդակել նրան:

ԿՈՐՅՈՒՆ

Վիրավոր եր նա, ընկեր վաշտապետ,
Հազիվ, հազիվ եր քայլում նա ինձ հետ:

ՎԱՇՏԱՊԵՏ

Մսածկոս

Պետք է ստուգել: Կամ մի խաղ ե սա,
Յեվ կամ թե ինչ վոր վտանգ կա իրոք:

Կորյունին

Շուտ վարդանին ու Ռուբենին ասա
Թողնեն ամեն ինչ, շտապեն ինձ մոտ:

ԿՈՐՅՈՒՆ

Հստմ եմ յես ձեզ, ընկեր վաշտապետ:

ԴԻՔՏՈՐ

ԻՃԲԸ ԻՐԵՆԸ

Նրանք յերկուսն ել քաջ հետախույզներ,
Կյանք չեն խնայի հաղթության համար,
Յերկու իրարու սիրող ընկերներ,
Սրտերում պայծառ հույսեր վոսկեվառ:
Նրանք յերկուսն ել քաջ ու համարձակ,
Ահն ու յերկուսն ոտար է նրանց,
Նրանք թշնամու գնդակների տակ
Կատարել են՝ ինչ ասվել է իրանց:

Դալիս են վարդանը, Ռուբենը յեվ Կորյունը

ՎԱՐԴԱՆ

Ահա յեկանք մենք, ընկեր վաշտապետ,
Մեզ ասացին, վոր դուք կանչել եք մեզ,
Պատրաստ ենք արդեն մեր ձիերի հետ
Սլանալ կարմիր գնդակների պես:

ՎԱՇՏԱՊԵՏ

Վտանգված է մեր թիկունքը կարծես,
Մեզ ողակել է ուղում թշնամին,
Սլացեք հիմա արծիվներ յես,
Սլացեք ինչպես լեռների քամին:
Դուք մանրամասն պետք է իմանաք,
Թշնամին ուր է խփել բանակը,

նիչ ե մտադիր, ուր ե շարժվելու
Յեվ զորքի վորոշ ուժն ու քաջակը:

ՌՈՒԲԵՆ

Մենք լսում ենք ձեզ, ընկեր վաշտապետ
Մեր ձիերն արդեն սպասում են մեզ,
Այս իսկ բոպելին մեր ձիերի հետ
Կսուրանք սարից փչող հողմի պես:

ԿՈՐՑՈՒՆ

Այս իսկ բոպելին համբուրեմ յես ձեզ:

Համբուրում ե վարդանին

Այս քեզ...

ՌՈՒՔԵՆԻՆ

Այս ել քեզ...

Համբուրելու ժամանակ գլխարկը ընկնում ե: Վերցնում ե

Իսկ սա... Այս ել մեզ...

Գլխարկը ծածկում ե, վարդանը յեվ Ռուքենը գնում են,
Կորյունը գնում ե նրանց հետևից

ԴԻՔՏՈՐ

Յեվ սլացան կարիճները քաջարի,
Նժույգներին հողմերի պես սրընթաց,
Յեվ անվրեպ գնդակներին պես արի,
Բլուրներով ու լեռներով իջան ցած:

Յեվ ձիերին պատեց քրտինք ու փրփուր,
Յեվ բաշերը յեղան հովից ցիր ու ցան,
Փռչին յելավ ըռնեց ճամբեքն ամենուր,
Յերկու զինվոր հողմերի պես սլացան:

Բ. ՊԱՏԿԵՐ

Դաշնակցական բանակի շտաբը

Նստած են սեղանի շուրջը սպաներ, յեւ մի խմբապետ: Գիւեր և

ԳԵՆԵՐԱԼ

Այսպես, պարոններ, յես բաց եմ անում
Պորհրդի նիստը մեր գինվորական,
Յես կարծում եմ վոր արդեն մեր զորքի,
Պորհրդի բոլոր անդամները կան:

ՍՊԱ

Բոլորն այստեղ են, պարոն գեներալ:

Բ. ՍՊԱ

Նիստը իրավամբ կարող ենք բանալ:

ԳԵՆԵՐԱԼ

Այո, կարծես թե չկա բացակա:

Գ. ՍՊԱ

Թե կա, դե նա ել ուր վոր ե կգա:

ԳԵՆԵՐԱԼ

Այո, հենց յես ել այդպես եմ կարծում:

Դառնալով կողին նստած սպային

Իհարկե դու ան կանգնած պահակ կա:

ՍՊԱ

Կասկածից դուրս ե պարոն գեներալ:

Թողուն իր թևով շենքին մոտ չի գա:

ԳԵՆԵՐԱԼ

Այսպես ուրեմն, պարոն սպաներ:

Գեներալի խոսքը ընդհատւմ ե դսից լսվող աղմուկը

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Կոտորեցին, մորթեցին, ավերեցին, աման...

Բոլորը լսում են իրենց ուշադրությամբ

ՊԱՀԱԿ

Ե՛յ, ո՛վ ե այդտեղ վռնում շան նման...

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Աստծու արարածը, թշվառ ծերունին,
Վորը ապաստան, քուն, դադար չունի:

ԳԵՆԵՐԱԼ

Սպային

Ասա թող բռնեն, ներս բերեն նրան:

ՍՊԱ

Մոտենում ե դուս: Պահակին

Բռնել, ներս բերել այդ քաֆթառած շան:

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Շրջում ե կույր ծերունին ամեն ժամանակ,
Նրա համար նույնն ե ցերեկվա լույս, թե խաւար:

Պահակը ներս ե բերում: Նրան առաջնորդում ե Արամ:
Ծերունին խաբխափելով առաջ ե գալիս

Ո՞վ ե, հվքեր են, վոր նստել են այստեղ...

ԳԵՆԵՐԱԼ

Ինչ ես վրոնում, ծերունի, այս կես գիշերին,
Ու տանջում ես քեզ հետ այդ յերեխային:

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Դյուղերն ավերեցին, յերկրում մարդ չմնաց...
Կույր ծերունին ման ե գալիս ամենուր,
Կույր ծերունու սրտում կսկիծ ու միմուռ:

ՍՊԱ

Դիտեմ յես նրան, խելադար ե նա:

ԳԵՆԵՐԱԼ

Լավ խուզարկեցեք, թողեք դեռ մնան:

Պահակը խուզարկում ե յերկուսին, նսեցնում պատուհանի տակ

Բայց տես, ել ձայնդ վոչ վոք չիմանա:

Այժմ սկսենք, պարոն սպաներ:

Հայտնի յե արդեն մեր պլանը ձեզ,

Կարմիր զորքերի թիկունքը բռնել,

Ու ջարդել նրան: Այդ կիբրկի մեզ:

ԽՄԲԱՊԵՏ

Մինչ այդ սեղանի մոտ նստած ննջում եր ու մեկ մեկ վեր բռնում

Պարոն գններալ ինչ ժողով, ինչ բան,

Խուճախ թող առնեմ, աստված ե վիշ,

Ջարդեմ, կոտորեմ կարիճի նման,

Եգուց իրիկուն յետ դառնամ ու գամ:

Դեռ յեթե զորքն ել չունի հաց, պարեն,

Մի հինգ, վեց գյուղ ել թալանեմ բերեմ:

ԳԵՆԵՐԱԼ

Պարոն խմբապետ, դու մի խանգարի:

ԽՄԲԱՊԵՏ

Ջայրացած վեր ե կենում

Պայթելս կըզա, յես քեզ ինչ արի:

ԱՐԱՄ

Կույր ծերունուն

Յես վախենում եմ, կկռվեն հիմա,
Ասես բարկացած ինձ ե նայում նա:
Կույր ծերունին լռեցնում ե Արամին
Բ. ՍՊԱ

Հետախույզները թնչ լուրեր բերին:

Պատուհանից յերեվում են Վարդանի յեվ
Ռուբենի գլուխները
ԳԵՆԵՐԱԼ

Դու, պարոն սպա, մի քիչ համբերի:
Ուղարկել եյինք մենք հետախույզներ,
Վոր հետախույզեն մեր յերթի ճամբան,
Սակայն նրանցից մեկն ե յետ յեկել,
Յերկրորդը զուրս ե յեկել դավաճան:
Փորձել ե փախչել կարմիր զորքի մոտ,
Մեկ առ մեկ պատմել պլանները մեր.
Բայց առաջինը քաջ ու կրակոտ,
Կարողացել ե նրան սպանել:
Այսպես՝ ուրեմն, պարոն սպաներ,
Ըստ մեր ստացած տեղեկությունների,
Մեր առաջ ազատ կան լավ ճամբաներ,
Վոր կոտրենք մեջքը կարմիր զորքերի:
Բ. ՍՊԱ

Բայց ներողություն, պարոն գեներալ,
Մեզ հարկավոր ե վոր ճամբով գնալ:
Նեռս ե մտնում մի գիկվոր

ԶԻՆՎՈՐ

Միտալը Հարդինգը, պարոն գեներալ
Բրիտանական սպայակույտից:

ԳԵՆԵՐԱԼ

Միտալը Հարդինգը:

Սպային

Ներս հրավիրիր:

Սպան դիմում ե դեպի դուր յեվ վերադառնում միսքս Հարդինգի
հետ: Բոլոր վոսի յեն կանգնում

ՀԱՐԴԻՆԳ

Խոսում ե անգլերեն

Ձեր զինվորական խորհրդին հայտնեք
Բրիտանական սպայակույտի ջերմ վողջույնները:

Սպան քարգմանում ե

Յեվ առանձնապես ձեր գեներալին:

Սպան քարգմանում ե

ԳԵՆԵՐԱԼ

Սպային

Հայտնեցեք խորին շնորհակալություն:
Յեվ խնդրեք հայտնել սպայակույտին
Փոխադարձաբար վողջույն սրտազին:

Սպան քարգմանում ե: Հարդինգը գլխով հավանություն ե տալիս

ԳԵՆԵՐԱԼ

Յեվ վոր թող լինեն հաստատ համոզված

Վոր կկատարենք իրենց ոգնությամբ
Վորջ խնդիրները մեզ հանձնարարված:

Սպան քարգմանում ե

ՀԱՐԴԻՆԳ

Լավ ե այդ, շատ լավ:

Նստում եմ

ԳԵՆԵՐԱԼ

Շարունակում ե ժողովը, ցույց ե տալիս փառքի վրա

Դե, շարունակենք:

Սպային

Իսկ դուք թարգմանեք:

Պատկերը այս ե: Մերոնք են այստեղ:

Ու կարմիրներն են այս կետի վրա.

Այս կետերի մեջ կռիվ ե ահեղ,

Իսկ մենք կբռնենք այս բլուրն ահա.

Իսկ այս բլուրը այս ճանապարհով,

Կարծեմ կբռնենք հանգիստ, ապահով:

Յեվ յեթե մենք այս կարճ ճամբով գնանք,

Վաղը կեսորին մենք վրա կտանք:

Դե, այժմ հանգիստ մտածեք պահ մի,

Նոր ձեր կարծիքը կասեք մի առ մի:

ԱՐԱՄ

Կույր ծերունուն

Ճանաչեցի յես նրանցից մեկին,

Կարծես նա յեր վոր տարավ հայրիկին:

Ծերունին ձեռնով բորում ե, վոր լոխ

ԴԻՔՏՈՐ

Սակայն նայեցեք, նայեցեք նրանց,

Լսում են նրանք լուռ, գաղտազողի,

Պատուհանի բաց փեղկից կռացած,

Առանց վարանման, առանց լերկյուղի:

Հետախույզներն են կարմիր զորքերի,

Կտրիճները այն, վորոնք սրընթաց

Կպած մեջքերին իրենց ձիերի,

Կռվի ճակատից ահա իջել ցած,

Հասել են այստեղ, անվախ անվարան,

Պատուհանին են կռացել հիմի,

Լսում են նրանք ամեն, ամեն բան,

Լսում են նրանք ահա մի առ մի:

ԳԵՆԵՐԱԼ

Իսկ ով ինչ կասի հիմա այս մասին,

Կարծում եմ պարզ ե բոլորիդ համար:

ԽՄԲԱՊԵՏ

Աչքերը տրեխով, ինքն իրեն փնդիքում ե

Բան ասաց, և դեռ կարծիք ե ուղղում:

Կռվի ե, ասա, վեր կենամ գնամ:

Ել ինչ կարտ, ինչ գիծ... ինչ խոսք, ինչ ուսուց,
Նստել ե հստեղ, խոսում ե խամ-խամ:

ՍՊԱ.

Միտալը Հարդինդը ասաց այս մասին,
Պլանը լավ ե, ու ճամբան հարմար:

Բ. ՍՊԱ.

Յես ել կարծում եմ, թե այդ ե յեւքը,
Թե չե ճակատում կորած ե դորքը:

Պատահանի փեղը բխկում ե: Արամը նայում ե պատահանին
յեկ վախենում

ԱՐԱՄ

Վայ, պապ...

ԳԵՆԵՐԱԼ

Ինչ եր, այն ով եր, դուքս թռեք հապա:

Վարդանն ու Ռուբենը փախչում են: Դուքս են նետվում մի ֆանի
սպա: Բոլորը խառնվում են, դրոսում լսվում ե մի ֆանի-կրակոց

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Կոտորեցին, մորթեցին, ավերեցին, աճա՜ն...

ԳԵՆԵՐԱԼ

Կարեցեք ձայնը այդ քաֆթառած շան:

Բ. սպան ներս ե մտնում

Բ. ՍՊԱ.

Մեկը սպանվեց, մյուսը փախավ,
Մերոնը վազեցին յետեից նրա:

ԳԵՆԵՐԱԼ

Դազազած

Իսկ ինչ եր անում պահակը դռան:

Բ. ՍՊԱ.

Սպանել եյին դաշույնով նրան:

Մընում ե

Գ. ՊԱՏԿԵՐ

Կարմիր դորքերի խրամաները
Կռիվը նույն քափով առաջ է գնում

ԴԻՔՏՈՐ

Հետախույզը դառնում է յետ,
Մենակ է նա այս անգամ,
Նրա ընկերն իր ձիու հետ
Դաշտում գտան գերեզման:
Նրա աչքը յետև է դեռ,
Կարծում է թե նա կգա,
Ու բարձրանում է սարն ի վեր
Բայց ընկերը ել չկա:
Հանգիստ նրան, այն հերոսին,
Այն մարտիկին քաջարի,
Վոր իր կյանքի շունչը վերջին,
Ձոհեց իրա պայքարին:
Թռչունները կանեն թաղում,
Հողմը մահերդ կհնչի,

Նրա շիրմի սեվահողը,
Ամպը հանդարտ կթրջի:
Հանգիստ նրան, այն հերոսին,
Այն մարտիկին քաջարի,
Վոր իր կյանքի շունչը վերջին,
Ձոհեց իրա պայքարին:
Յեվ մտածում է ինքն իրան,
Հետախույզը մեն — մենակ,
Թեքված ձիու բաշի վրա
Լուռ սլանում է արագ:
Մի գնդակ ել դիպավ իրան,
Յետ է դառնում վիրավոր,
Ու ալ կարմիր վարդի նման,
Դեռ տնջում է վերքը խոր:
Յեվ դոփում է ձին սրընթաց,
Հետքից թողնում է փոշի,
Ու քրտինքից բաշերը թաց,
Դարձել են տաք գոլորշի:
Ու բլուրից իջնում է նա,
Սլանում են դեպի ցած,
Փնչում է ձին գետի նման,
Դետի նման փրփրած:
Հասավ ահա, քրտինք ճակտին,
Ձիուց հենց նոր է իջել,
Շտապում է պատմել պետին,
Ինչ տեսել է այս գիշեր:

Հեվալով նեղ է բնկնում Վարդանը
Վիրավորված ու մոտենում է վազապետին

ՎԱՐԴԱՆ

Ընկեր վաշտապետ, հենց նոր հասա յես,
Յեկել եմ մենակ, Ռուբենը չկա,
Նա ընկավ աջնոց քաջ հերոսի պես,
Այդ հերոսության յես եյի վկա:
Նրա հետ մեկտեղ մենք կես գիշերին,
Հասանք շտաբը դաշնակ զորքերի,
Դաշնակ սպաներն հավաքվել եյին,
Մասնակից յեղանք նրանց ժողովին:
Մենք պատուհանից լսում եյինք լուռ,
Բայց վերջին պահին նկատեցին մեզ,
Մենք փախանք, բայց մի շիկացած գնդակ,
Նրան իր ձիուց գետին տապալեց:
Իսկ յես վերավոր վերադարձա յետ,
Այսպես պատահեց ընկեր վաշտապետ:

Մի պահ լուսփյուն ե տիում

ՎԱՇՏԱՊԵՏ

Մեր ամբողջ վաշտի հարդանքը նրան,
Վոր ընկավ կովի գերքերի վրա:

Պաուզա

Իսկ այժմ պատմիր, ասա մի առ մի,
Ինչ դավ ե նյութում մեր դեմ թշնամին:

ՎԱՐԴԱՆ

Ընկեր վաշտապետ, մեր թիկունքն ի վեր
Դաշնակ զորքերի մեծ մի գումարտակ,

Մտադիր ե այս բլուրը բռնել,
մեր վաշտն առնել թնդանութի տակ:

ՎԱՇՏԱՊԵՏ

Այդպես, գեղեցիկ: Իսկ դու չիմացար
Թե վոր կողմից են ընկնում ճանապարհ:

ՎԱՐԴԱՆ

Նրանք գալու յեն բլրի դիմացի
Հարթ ճանապարհով, վաղ լուսաբացին:

ՎԱՇՏԱՊԵՏ

Մեզ հարկավոր ե բլուրը առնել,
Քանի դեռ նրանք այնտեղ չեն կանգնել:

ՎԱՐԴԱՆ

Իսկ այն վերավոր դաշնակ գինվորը,
Վորը նախապես մեզ լուր եր բերել,
Նա հետախույզ եր չեղել այդ որը,
Ու ընկերոջ հետ ճամբա յեր ընկել:
Բայց ճամբի կիսին յետ եր կանգնել նա,
Փախել եր մեզ մոտ, վոր իմաց անի,
Սակայն ընկերը խփել եր նրան,
Խփել եր նրան իրեն թշնամի:

ՎԱՇՏԱՊԵՏ

Նշանակում ե շուտ չեն դա նրանք,
Մերոնք ավելի շուտ կը բարձրանան:

Դե, կանչիր այստեղ, քաջ գնդացրորդ
Սուրենին շուտով թող վազի ինձ մոտ:

ՎԱՐԴԱՆ

Լսում եմ յես ձեզ ընկեր վաշտապետ:

Գնում ե

ՎԱՇՏԱՊԵՏ

ԻՃԲԳ ԻՐԵԳ

Իսկ յեթե նրանք պահել չիմանան...

Իսկ յեթե ջարդեն, շարժվեն դեպի մեզ...

Սուրենը քաջ է, յես գիտեմ նրան...

Այո, յեղ չկա, միմիայն այդպես:

Բայց հանկարծ յեթե... այլ կերպ չի լինի...

Այլ կերպ չի լինի... վոչ, ճարպիկ ե նա...

Ամբողջ դիրքեր ե պահել նա մենակ,

Մի ամբողջ գնդի գնդակներն տակ:

Մեքում եմ Սուրենը յեկ վարդաճր: Սուրենը մոտենում ե վաշտապետին

ՍՈՒՐԵՆ

Լսում եմ յես, ձեզ ընկեր վաշտապետ:

ՎԱՇՏԱՊԵՏ

Վտանդի տակ ե թիկունքը ահա,

Ամբողջ իմ հույսն եմ դրել քեզ վրա,

Դաշնակ գործերի վողջ մի գումարտակ,

Ուղում ե առնել մեզ գնդակի տակ:

Դու պետք ե մոտիկ բլուրը առնես,

Թույլ չտաս նրանք շարժվեն դեպի մեզ:
Դե, ինչ ես ասում, պատասխան տուր ինձ,
Քանի զինվորով կարող կլինես:

ՍՈՒՐԵՆ

Տուր տասը զինվոր, ե յես նրանց հետ
կջարդեմ նրանց, ընկեր վաշտապետ:

ՎԱՇՏԱՊԵՏ

Դեհ, համաձայն եմ: Ուրեմն այդպես:
Թիկունքը քեզ եմ վստահանում յես:

ՍՈՒՐԵՆ

Խոսք եմ տալիս քեզ ընկեր վաշտապետ,
Կմեռնեմ ե կամ չեմ նահանջի յետ:

ՎԱՇՏԱՊԵՏ

Դե, անցիր գործի: Ընտրիր տաս ընկեր,
Հավաքիր հետդ նրանց այստեղ բեր:

ՍՈՒՐԵՆ

Լսում եմ յես քեզ, ընկեր վաշտապետ:

Սուրենը գնում ե

ՎԱՇՏԱՊԵՏ

Վարդաճից

Իսկ դու, սիրելիս, թեև գիտեմ յես,
Վոր վիրավոր ես, հոգնած ե անքուն,

Քալց վոչ մի ուրիշ չեւք չկա կարծես,
Մեզ հարկավոր է ուժ ու ոգնություն:
Կապիր քո վերքը, թաքուն ծպտված
Հասիր մերոնց մոտ, պատմիր ամեն բան,
Նկարագրիր վիճակն ըստեղծված,
Վոր նրանք շտապ մեզ ոգնության գան:

ՎԱՐԴԱՆ

Ընկեր վաշտապետ, կմեկնեմ իսկույն,
Ինձ չի խանգարի վերք ու հոգնություն:

ՎԱՇՏԱՊԵՏ

Ասա, թիկունքը չեթե տանուլ տանք,
Զորքը կմնա թնդանոթի տակ:

ՎԱՐԴԱՆ

Հսում եմ չես ձեզ, ընկեր վաշտապետ:

Վաղանք գնում է, գալիս են Սուրենը յեվ ասար զինվորներ

ՍՈՒՐԵՆ

Ընկեր վաշտապետ, ահա է նրանք:

ՎԱՇՏԱՊԵՏ

Յեվ դժւ յես աչստեղ, պարտիզանուհի:

ԱՐԾՎԻԿ

Յեվ չես եմ աչստեղ, ընկեր վաշտապետ,
Յեվ մենք բոլորս պատրաստ ենք արդեն.

Կսուրանք հիմա մենք հողմերի հետ,
Մըրիկի նման մեր թշնամու դեմ:
Կամ հաղթանակով մենք չես կգառնանք,
Կամ կընկնենք աչստեղ զաշտում ամայի,
Ու աչս ժամանակ բաց յերկնքի տակ,
Թող հողմը տխուր մեզ վրա վայի:

ՎԱՇՏԱՊԵՏ

Կեցցես, քաջ աղջիկ, հերոս իսկական,
Սլացիւ խիզախ արծիւի նման:

ՍՈՒՐԵՆ

ԸԳԿԵՐՆԵՐԻՆ

Այժմ ընկերներ, ժամ է մեկնելու,
Ահագին ճամբա ունենք կտրելու:

ՎԱՇՏԱՊԵՏ

Դե, հաջողություն խիզախ մարտիկներ,
Հաղթանակ փուլի թող ճամբեքին ձեր:

ՍՈՒՐԵՆ

Սեղմում է վազապետի ձեռք

Յտեսությո՞ւն ասեմ, թե մնաս բարով...

Վազապետ փառավում, համբուրում է Սուրենին, մնացած ասար
զինվորներն յեվս հրածեւ են ցալիս վազապետին

ՎԱՇՏԱՊԵՏ

Հաջողություն ձեզ, պայծառ ընկերներ...

Դ. ՊԱՏԿԵՐ

ԴԻՔՏՈՐ

Ու մինչև կեսոր գնացին նրանք,
 Ու մինչև կեսոր հասան բլուրին,
 Պահվեցին այնտեղ մութ խութերի տակ,
 Ու մինչև կեսոր մնացին լռին:
 Կեսորին հեռվում բարձրացավ փողի,
 Գալիս են դաշնակ զորքերը ահա,
 Ու մինչ յեկնում են բլուրի գոշին,
 Կրակ է թափվում զորքերի վրա:
 Յեզ սկսում է կռիվն ամենի,
 Սուրենի խումբը դարձել է կրակ,
 Թնդում են լեռներ, թնդում են ելի,
 Ձորն է դրմբղմբում գնդակների տակ:
 Նրանք կռվում են, վազում խութից խութ,
 Խրամից խրամ, թռչում քարից քար,
 Ու թվում է թե ահադին մի գունդ,
 Կրակում է իր ուսմբերը հաղար:

Դսկ գնդացրորդ Սուրենը ահա,
 Կռացել է իր գնդացրի վրա,
 Գնդակների հորդ կարկուտ է թափում
 Դաշնակ զորքերի բանակի վրա:

Դսկ դաշնակցական բանակում արդեն,
 Տիրում է խուճապ, հուսալքություն,
 Կարմիր զորքերի անեղ կովի դեմ
 Կորցրել են նրանք ուժ ու զորություն:
 Արդեն զորքերի կեսից ավելին,
 Ջարդվել են կարմիր գնդակների տակ,
 Արդեն սարսափն է պատել բոլորին,
 Չեն ուզում գրկել մահն աննպատակ:

Դաճակցական խրամասներ: Կռվում են: Խրամասներից ով դուրս է
 հանում գլուխը, բնկնում է
 ՍՊԱ

Կռվեցեք, թե չե վկա յե աստված,
 Ել համբերություն չկա, չմնաց:

Յերկու զինվոր մի յերրորդ անգեմ զինվորի առաջները գցած բերում
 են սպայի մոտ

ԶԻՆՎՈՐ

Տես, պարոն սպա, փախչում եր ահա,
 Չեմացել եր նա սուտ վիրավորված,
 Ու հենց ճակատից հեռացավ մի քիչ,
 Պատգարակից նա թռավ, իջավ ցած:

Բավական ե մեզ չարչարեք այսպես,
 Չենք ուզում կռիւի, մեռնել չենք ուզում,
 Ինչ եք մեր վրին կպել ոճի պես,
 Չէք տեսնում, թե մեզ ինչպես են հնձում:

ՍՊԱ

Փախչում եյիր համ, դու լիրբ անդգամ,
 Սուտ մեռուկ եյիր ձեացել դու, համ:

Ասեմանակ ե կրակում երա վրա

Դե առ, իսկապես մեռիր այս անգամ,
 Դավաճանների վախճանը ահա:

Կռիւր ավելի յե ուժեղանում, բնկնողների քիւր հեզհեռե շատանում
 ե: Սպան վիրավորվում յեւ բնկնում ե: Դաւանակցական գորքեր քիշ
 քիշ հեռ են գնում

ԴԻՔՏՈՐ

Յեւ սաստկանում ե կռիւն ավելի,
 Ընկնում են ահա զինվորներ բազում,
 Տասը զինվորներ կռվում են ելի,
 Ու գնդացիքը կարկուտ ե հազում:
 Ու գնդացիքը հնձում ե ասես,
 Դաշնակ զորքերի խրամներն ահա,
 Ու գնդակները կայծակների պես,
 Իջնում են դաշնակ զորքերի վրա:
 Ընկնում են դաշնակ զինվորներն ահա,
 Ու նոսրանում ե շարքերը նրանց,

Խրամատներում թմբերի վրա,
 Բազում զինվորներ ընկել են սառած:
 Բայց տեսեք ահա նահանջում են յետ,
 Կռիւն ավելի սաստկացավ ասես,
 Փախչում ե զորքը անհույս ահաբեկ,
 Աղմուկից խլշած նապաստակի պես:

Դաւանակ գորքեր փախչում են: «Ուտ» կանչելով բեմ են քափվում
 գնդացուրդ Սուրենը ու երա հեռ յեղած զինվորներից յոթ հոգի: Մի
 քմբի վրա բնկած ե դաւանակցական սպան, վոր վոսֆից վիրավոր ե
 ու յի կարողանում փախչել

Ինչ յեղավ, տղերք, Արծվիկին բերլին,
 Թե մեռնակ թողիք դուք նրան ճամբին:

Ա. ԶԻՆՎՈՐ

Վոչ, յերկու տղերք բերում են նրան,
 Ուր վոր ե հիմա նրանք կերեւման:

ՍՊԱ

Ախ, ոգնեցեք ինձ, մեռնում եմ աման...»

Սուրենը լուռ նայում ե երան: Բոլորը նավափում են երա շուրջը
 ԿՈՐՑՈՒՆ

Սուրեն, թույլ տուր մի յես ոգնեմ նրան:

Ասեմանակը փախում ե, Սուրենը լուռ բռնում ե երա ձեռքը

ԴԻՔՏՈՐ

Դիտե՛ք այդ ուր ե ոգնություն խնդրում,
 Ապա նայեցեք, կհիշեք նրան:

Այդ այն սպան ե, վոր մի որ գյուղում,
կատաղած, փրփրած հրեշի նման
Քաշ տվեց, տարավ հիվանդ Սուրենին,
Սպանեց նրա կնոջն անպաշտպան,
Ու թողեց անող, վորը բոլորովին,
Սովի մատնված մի հատիկ մանկան:
Յեւ տեսնում եք դուք զինվորին այն հին,
Վոր կանգնած ահա նրան ե նայում,
Զայրուլթ ե արդյոք, թե՞ դարմանք դեմքին.
Հիշում եք արդյոք նրան այն գյուղում:

ՍՈՒՐԵՆ

Լավ նայիր ապա, չե՞ս ճանաչում ինձ,
Յես այն հին հիվանդ զինվորն եմ ահա,
Մենք հանդիպեցինք իրարու նորից,
Միայն այս անգամ դու գետնի վրա:

ՍՊԱ

Ա՛խ, խղճացեք ինձ, վերավոր եմ չես,
Հող լինեմ վոտքիդ, մատաղ լինեմ ձեզ:

ՍՈՒՐԵՆ

Քաշ տվեցիր ինձ հիվանդ վիճակում,
Սպանեցիր իմ կնոջն անպաշտպան,
Հիշում ես կինս ինչպես եր տնքում,
Դեռ աղանջիս ե ձայնը իմ մանկան:
Դե, ինքդ ասա, ի՞նչ անեմ յես քեզ,
Վոր աղաչում ես հիմա ինձ շան պես:

Բ. ԶԻՆՎՈՐ

Սուրեն, բերեցին արդեն Արծվիկին,
Նրա վոտները հաղիվ են քայլում:

Յեղու գինվոր պարսիզանուհու քեկեր մսած բերում են: Սուրենը
յեւ մյուս գինվորները շուտ են գալիս դեպի նա: Պարսիզանուհին
սնում ե ծանր: Նրան նսեցնում են բեմի կենտրոնում մի փաթի վրա:
Այդ միջոցին սպան սողալով փախչում ե

ՍՈՒՐԵՆ

Պարսիզանուհուն բերող գինվորներին

Ինչպես, կապել եք դուք նրա վերքը:

Գ. ԶԻՆՎՈՐ

Կապեցին, այո, այնտեղ տղերքը:

ԱՐՄՎԻԿ

ՏԵՄԱԼԻ

Աչքերս մթնում են... Ահ, մեռնում եմ յես...
Բոլորդ այստեղ եք... Յերը տեսնեք նրան,
Մեր վաշտապետին, ասացեք վոր յես
Ընկա արծվի պես: Իսկ յերը հաղթեք դուք,
Յեւ լեթե հողում շիրիմ ունենամ,
Ինձ այցի գալիս, բերեք ինձ համար
Մեր խորհրդային հողից բարձրացած
Պայծառ ծաղիկներ... ալ ու արնավառ...

Մեռնում ե: Բոլոր գլխահները հանում են յեւ գլխահակ նայում
են նրան: Կոչումը բարձր ձայնով հեկեկում ե: Սուրենը կոտորում յեւ
լուռ համբուրում ե նրան

Ե. ՊԱՏԿԵՐ

Բեմը մուկ. բարձրացող տարածութիւն
ԳԻՔՏՈՐ

Յեւ հերոսների արյունից վառման,
Փայլ առավ մի ալ պայծառ դրոշակ,
Ու կյանքով լեցուն արևի նման,
Շողշողաց մեր ջինջ, լաղուր յերկնի՞ տակ:

Նեսն է մեկում Սուրենը գլուխն ու յերեսը կապած, աշունտ. մոտե-
նում բարձունքին ու պարզում է կառիք դռակը
ԳՐՈՇԱԿԱԿԻՐ

Հաստատ ու ամուր մնաւ այս հողում,
Մեր ալ արյունով ներկեցինք մենք քեզ,
Այստեղ մենք մեր հին կյանքն ենք գազադում,
Բարձրացնում ենք քեզ մեր փրկութեան պես:
Թող քո փայլի տակ կառուցվի նոր կյանք,
Նոր յերջանկութեան պայծառ որբեր զան,
Սերունդներ աճեն քո ստվերի տակ,
Մեր արյամբ ներկված, կարմիր դրոշակ:
Դռակը խռում է բարձունքի վրա

ՅԵՐՐՈՐԴ ՅԵՐԳ

Ա. ՊԱՏԿԵՐ

ԳԻՔՏՈՐ

Յեւ տարիներ անցան ու յեկան նոր որբեր,
Ու բերին նոր պայծար ու նոր մարտեր բերին,
Յերկիրը բարձրացավ ու կյանք առավ նորեն,
Փառք կառուցող մարդկանց հզոր բանակներին:
Յերկիրը բարձրացավ, նոր սերունդներ յեկան,
Նոր յերջանիկ կյանքի սերունդները խնդուն,
Վորոնց ջինջ աչքերից նայում է ապագան,
Վորոնց զվարթ կանչով վողջ յերկիրն է թնդում:
Կառուցվեցին բազում քաղաքներ ու շենքեր,
Գործարաններ հսկա և կալաններ լույսի,
Յեւ ջրանցքներ քանի, վորոնք վռուղեցին
Բամբակի բլուր գաշտեր, արտեր հացաբուլի:
Յեւ շատ գետերի հուն փոխվեցին մեր յերկրում,
Յեւ շատ ապառաժներ խորտակվեցին հավետ,

Վորոնք բազում դարեր գետերի ավերում,
Կովի ելին մտել նրանց ջրերի հետ:
Համայնացան ահա մեր գյուղերը բոլոր,
Դյուզազին մեր մտավ կոկեկտիվ կյանքի մեջ,
Ու դարձել ե հիմա ունեվոր ու հզոր,
Յեվ իր սերունդներով հողի տերն ե անվերջ:
Յեվ յեռում ե հիմա վողջ յերկիրը ահա,
Բոլոր անկյուններում աշխատանք ե համառ,
Քաղաքներում, գյուղում ճամբաների վրա,
Յեվ շախտերում բոլոր անթափանց ու խավար:
Ու թող բացվեն հիմա աշխատանքով յեռուն,
Պղնձի շախտերը ձեր աչքերի առաջ,
Ոչնաեղ կյանքը կերտող բանականն են կովում,
Այնտեղ վորոտում ե հաղթանակի շառաչ:

Պղնձահանքերում Շախտեր

Բրիգադներով աշխատում են հանքավորներ: Լսվում ե լիսնախա
յերգի ձայն

Շախտերում անհամար
Շախտերում այս խավար,
Քանդում ենք, քանդում ենք, քանդում,
Ու թափից մեր հզոր,
Չարկերից մեր ամուր,
Ձորերն ու լեռներն են թնդում:
Ո, չերկիր քեզ համար,
Մեր ձեռներն անհամար,
Թող լինեն յեռանդուն, անդուր,
Մեր հեվքից, մեր յերգից

Մեր կովից քրտնավառ,
Ձորերն ու լեռներն են թնդում,

Ա. Հանգստություն

ԱՐԱՄ

Յերանի այսոր լույսը հմարի:

Բ. ԲՐԻԳԱԴԻՐ

Յերանի, տղաս:

ՍԵՂԻՐԱԿ

Իսկ չեթե մարի,
Դժվար կլինի գործը, շատ դժվար:
Այսպիսի բան դեռ չեմ տեսել կյանքում,
Վոր լույսն ամեն որ կտրվի հանքում:

ԱՐԱՄ

Լսե՛լ ես, քեռի:

ԲՐԻԳԱԴԻՐ

Ի՞նչ: Ասա, ապա:

ԱՐԱՄ

Հաստատ չգիտեմ, գուցե սուտ ե դա:

ՍԵՂԻՐԱԿ

Դե ասա լսենք, ի՞նչ ես ծամծմում:

ԱՐԱՄ

Ասում են թե այդ գիտամբ են անում:
Ասում են այնտեղ, լույսի կայանում,

Մի ինժեներ կա վերջերս յեկած,
Իբր թե այդ հենց նա ինքն է անում:

ԲՐԻՔԱՂԻՐ

Դատարկ խոսքեր են բոլորը, աղաս:

ՍԵՂՈՍԿ

Մոզա յե դարձել այդպես բան ասել,
Ու անմեղ մարդուն փորձանքը գցել:

Արամը լիք սայլակը մղում է դեպի դուռ

ՉԱՅՆ

Շախսերի խորհից

Եյ, հանքախորշ ենք պայթեցնում, զգուշը...

Լսվում է հեռավոր պայթյուն

Բ. Հանգախորում

Ա. ՀԱՆՔԱՓՈՐ

Լսեցի՞ր վոնց եր հետքը կորցնում:
Նա հենց ինքն է քնաս հասցնում,
Բայց հետևում են ասում են նրան:
Մինչ սրա գալը չկար վոչ մի բան:

Բ. ՀԱՆՔԱՓՈՐ

Ձե, խամ չե տղան:

Գ. ՀԱՆՔԱՓՈՐ

Բայց նա կը կորչի:

Ա. ՀԱՆՔԱՓՈՐ

Ասում են թե այս գործի հետ կապված
Ինքը ժողկոմը յեկել է Ղափան:

Արամը սայլակը առաջն արած գալիս է: Նրան անցկացելի հե-
տևում է Մուսեղը: Դիմացից գալիս է Անտոն (ղազնակ սպան, վոր
Սուրենին բանտարկեց) Արամը նայում է նրան, կանգ է առնում: Ան-
տոնը նույնպես կանգ է առնում: Մուսեղը բաժնվում է

ԱՐԱՄ

ԱՆՏՈՆ

Թվում է թե յես ճանաչում եմ ձեզ,
Ձեր դեմքը ինձ շատ ծանոթ է կարծես:

ԱՆՏՈՆ

Ծիծաղով

Ճիշտ է, դե ապա մի լավ մտածեք,
Իմացեք վերտեղ տեսած կլինեք:

ԱՐԱՄ

Մտածելով

Ճիշտը վոր ասեմ, չեմ կարողանում:

ԱՆՏՈՆ

Ծիծաղում ու խփում է նրա մեջքին

Այն ժամանակ դեռ դու փոքրիկ խուժան,
Շուկայից հաց, միրգ եյիր գողանում,
Ու մի անգամ քեզ լավ ղնդստեցի.
Հիմա հիշեցի՞ր:

ԱՐԱՄ

Ամաչելով

Ձեմ կարողանում:

Գնում ե: Անունը նույնպես շարունակում ե իր համբան: Մուտեղը
շարունակում ե հետևել

ԴԻՔՏՈՐ

Ձանաչեցիք դուք այդ յերկուսին
Վորոնք իրարու ծանոթ դուրս յիկան,
Դրանցից մեկը տարիներն ուսին,
Այն դաշնակցական սպան ե դաժան:
Իսկ այն բանվորը, քսան տարեկան,
Այն յերեխան ե քաղցի մատնված,
Վորի մորն այնպես գնդակեց սպան,
Իսկ հիվանդ հորը, բանակից փախած,
Քաշ ավեց, թողեց մանկանն անպաշտպան:
Խնամեց նրան մի կույր ծերունի,
Վորը գլուղից գյուղ տանում եր նրան,
Վոր կտոր հացը իրա բերանի,
Կտրում, տալիս եր անպաշտպան մանկան:
Յեվ այդ մանուկը տարիներ անցած,
Դարձել ե հիմա հանքերում բանվոր,
Ու յերկու ծանոթ վաղուց մոռացած,
Տեսան իրարու հանքի մեջ այսօր:

Անունը վերադառնում ե Սերոբի հետ յեվ կանգնում են բեմի առա-
ջին պլանի վրա

ԱՆՏՈՆ

Նա ճանաչեց ինձ:

ՍԵՐՈՐ

Նա ճանաչեց քեզ:

ԱՆՏՈՆ

Այո:

ՍԵՐՈՐ

Ուրեմն ի՞նչ: Կտրած ենք արդեն:

ԱՆՏՈՆ

Վոչ: Թե վորտեղ ե տեսել, չի հիշում:
Յես ասացի վոր հիշում եմ չես ճեղ,
Ծեծել եմ մի որ գողության համար,
Ու նա կարմրեց, ամաչեց այնպես,
Վոր ել հիշելը կզգա անհարմար:

ՍԵՐՈՐ

Իսկ յեթե մի որ միտքը դա հանկարծ:

ԱՆՏՈՆ

Մտածում ե

Իսկ դու կարող ես:

ՍԵՐՈՐ

Ինչ անեմ, ասա:

ԱՆՏՈՆ

Բոունցի խփում ե ավից

Այ, այսպես անել: Սպանել նրան:

ՍԵՐՈՐ

Սպանել նրան...

ԱՆՏՈՆ

Սպանել նրան...

Ձայն է լսվում, Անտոնը շատ ուզում է հեռանալ: Վազելով մոտե-
նում է նրան ցրիչը

ՅՐԻՉ

Հնկեր Սաֆարյան, դիրեկտորն ասաց,
Վոր կես ժամ հետո անցնեք իրեն մոտ:

ԱՆՏՈՆ

Լավ, քիչ հետո յես կայցելեմ նրան:

Գնում է: Յրիչը նույնպես գնում է

ՍԵՐՈՒՔ

Մճածկոս

Սպանել նրան... Սպանե՞լ նրան...

Սերոբը բաճկում է: Դատարկ սայլակը առաջ մղելով անցնում
է Արամը: Նրան շարունակում է հետևել Մուսեղը

ԱՐԱՄ

ԻճԳԵ իրեն խոսելով

Նա ինձ չի ծեծել: Բայց ուր, չեմ հիշում:

ՍԵՐՈՒՔ

Թափսոցից դուրս նայելով

Իսկ վերադարձին դու լավ կհիշես:

Բ. ՀԱՆՔԱՓՈՐ

Սիրտս վատ բան է նախագուշակում.

Չգիտեմ ինչու ճմլվում ե՛ս:

Հանկարծ թե մի բան պատահի հանքում,

Ով գիտե քանի մարդ մահ կունենա:

Ա. ՀԱՆՔԱՓՈՐ

Վոչինչ ել չկա, մի ներշնչիր քեզ,
Ու հանգիստ սրտով քո գործը արա:

Գ. ՀԱՆՔԱՓՈՐ

Ինչ պիտի լինի:

Բ. ՀԱՆՔԱՓՈՐ

Չգիտեմ, կարծես

Մահվան դող իջնի իմ սրտի վրա:

Ա. ՀԱՆՔԱՓՈՐ

Փուչ է ասածդ, ասում եմ յես քեզ:
Կարծես թե փոքրիկ յերեխա յես դու,
Յերկյուղ ես դարձել դու ամբողջապես,
Մահ ես ստեղծում ինքդ քո հոգուն:

Բ. ՀԱՆՔԱՓՈՐ

Լավ, ել չեմ խոսի, մի բան եր ասի:

Գ. ՀԱՆՔԱՓՈՐ

Կարող ես խոսի լավ բանի մասին:

Արամը հեռվից բղավելով վազում է դեպի դուռ

ԱՐԱՄ

Ահ, յես հիշեցի, հիշեցի նրան...
Այսօրվա պես պարզ հիշում եմ ահա...
Յես դիրեկտորի մոտը կգնամ...
Հիշեցի, հիւր ե, ախ դու սրիկա...

Սերոբի մոտով անցնելիս, Սերոբը բռնաբերում ե վար խփի,
բայց Մուսեղը լուռ բռնում ե նրա ձեռքիցը: Սերոբը ազատվում ե
նրա ձեռքից, վազում ե Արամի հետևից

ԲՐԻԳԱԴԻՐ

Այդ ի՞նչ ե յեղել:

Ա. ՀԱՆՔԱՓՈՐ

Խենթանցել ե նա:

Բ. ՀԱՆՔԱՓՈՐ

Ինչո՞ւ յեր այդպես գոռում, աղմկում:

ՍԵԴՐԱԿ

Սատանան տանի, բան չեմ հասկանում:

ԶԱՅՆ

Շախսերի խորհից

Ե՛յ, հանքախորշ ենք պայթեցնում, զգո՛ւյշ:

Այդ բալետիկ լույսեր մարում են, լսվում ե ուժեղ թնոյուն: Բարձրա
նում ե ընդհանուր աղմուկ— «Ոգնեցե՛ք»։ «Ի՞նչը կանգ առավ»։ Բոլոր
հանձնարները լայսերները վառած շախսերից ու հանձնարներից
դուրս են քափվում

Բ. ՊԱՏԿԵՐ

ԴԻՔՏՈՐ

Իսկ դիրեկտորն ու ժողովումն ահա
նստած են հիմա գրասենյակում,
Հարցերը բարդված իրարու վրա,
Նրանց ուղեղի դռներն են թակում:
Յետ են հանքերը այս վերջին ամսում,
Տվել են պակաս պղնձի քանակ,
Յեկող ամիսն էլ դեռ բան չի ասում,
Վոչ մի հույսի շող, վոչ մի հաղթանակ:
Յե՛վ նստած ահա իրար դեմ դիմաց,
Խոսում են հանքի գործերի մասին,
Ու հանքի ամեն պակասորդ ու բաց,
Քննում են ահա նրանք միասին:
Կանչել են նրանք հիդրոկայանի,
Ինժեներին, վոր իր խոսքը ասի,
Վոր ինքնագլուխ գործեր չընեն,

Ու վերջ ունենա խնդիրը լույսի:
Իսկ ինչ է լինում հիմա հանքերում,
Այդ մասին նրանք չեն իմանում դեռ,
Քանի շախտյոր է աշատեղ դեզերում,
Ու մահացել են քանի բանվորներ:

Պղնձահանքերի դերեկտորի գրասենյակը
Դիրեկտոր յեկ Սուրենը նսած են սեղանի առաջ, իսկ Վարդանը
հայտնում է

ՎԱՐԴԱՆ

Սուրեն, դու աշատեղ յերկա՞ր կմնաս:
Ուզում եմ գնալ աշատեղ գործեր կան:

ՍՈՒՐԵՆ

Կարող ես, Վարդան, բայց ելի կգաս:

ՎԱՐԴԱՆ

Վերադառնում ենք այսօր իրիկուն:

ՍՈՒՐԵՆ

Այո, անպայման, շատ եմ շտապում:

ՎԱՐԴԱՆ

Դե, յես գնացի:

Գնում է

ՍՈՒՐԵՆ

Դիրեկտորին

Հա, շարունակիր:
Ինչ է յեղել ձեզ, բանվորներ ունեք,

Սարքավորումը լրիվ է հանքում,
Միակ պակասը այն է, վոր մեկ մեկ
Ինչպես ասում եք լույսերն են հանգում:

Վե՛ր է կենում յեկ սկսում է փայլել

ԴԻՐԵԿՏՈՐ

Վոչ, սխտեմատիկ բնույթ է կրում,
Լույսերն հանգում են վերջերս ամեն ուր,
Այնպես է վիճակն հիմա հանքերում,
Վոր հոգսի մեջ է ամեն մի բանվոր:
Մինչև իսկ ասեմ, կասկածում ենք մենք,
Վոր թշնամու մատ մեջը խառ լինի,
Ու դրա համար մենք, կարծեմ յերեկ,
Մեկին ընտրեցինք, վոր նա հետևի:

Նե՛ս է մեկում Անոնը: Սուրենին տեսնելուց պես հանկարծակի յե
գալիս, փոքրվում է, բայց հետո հավաքում է իրեն

ԱՆՏՈՆ

Դիրեկտորին

Բարեկ, կանչել եք:

ԴԻՐԵԿՏՈՐ

Կանչել եմ, այո

Յույց տալով Սուրենին

Ծանոթ չե՞ք, խնդրեմ:

ԱՆՏՈՆ

Մոտենալով Սուրենին

Անտոն Սաֆարյան:

ՍՈՒՐԵՆ

Շեհսակի Գայելով Անճոնի աշխերին

Դս, Սուրեն Մամյան:

ԴԻՐԵԿՏՈՐ

ԱՆՏՈՆ

Դե, նստիր այստեղ:

Սուրենին

Համեցեք խնդրեմ:

Անճոնը ցատում է, Սուրենը օտուցնալով է քայլել: Հեռախոսի զանգ

ԴԻՐԵԿՏՈՐ

Վերցնում է լսափողը

Այո: Լսում եմ: Նա ինքն է խոսում:

Ձե՛ր լինի լեթե կես ժամ հետո գամ:

Ինձ մոտ մարդիկ կան: Հիմա չես ուզում:

Լավ, այս րոպեյին: Հենց հիմա կգամ:

Լսափողը կախում է

Սուրենն ինձ շտապ կանչեցին, գնամ,

Ճիշտ ահա րոպեյից կվերադառնամ:

Գնում է

ՍՈՒՐԵՆ

ԱՆՏՈՆ

Դուք ինժեներն եք հիդրոկայանի:

ԱՆՏՈՆ

Այո, աղպես ե:

Կողմ

Ճանաչե՞ց արդյոք:

ՍՈՒՐԵՆ

Անտոն Սաֆարյան...

Յես մի կոմունիստ ընկեր ունեցի

Անտոն Սաֆարյան — հիշեցի նրան:

Նա անհետ կորավ կովի որերին:

Անճոնը իրեն անհանգիստ է զգում: Սուրենը՝ կողմ

Սակայն ինչքան է սա նրան նման:

ԱՆՏՈՆ

Այո, ինչպես չէ, ուրիշներն ել կան:

ՍՈՒՐԵՆ

Կողմ

Յեղ ձայնն է նման, գրողը տանի...

ԱՆՏՈՆ

Վատ են աշխատում կարծես թե ձեզ մոտ,
յղպես աշխատել ամոթ է, ամոթ...

ԱՆՏՈՆ

Այդ դրանից է, վոր չեն գիտակցում,
Լավ, կուլտուրական բանվորներ չկան:

Կողմ

Լավ է, արդեն նա հեռացավ ինձնից:

ՍՈՒՐԵՆ

Կողմ

Բայց գուցե նա յե, անունը փոխած:

Նրան

Կուսակցական էք:

ԱՆՏՈՆ

Այո, դեռ Բազմից: Բայց ներեցեք ինձ:

Անտոնը Եփորված վե՛ր է կենում յե՛վ վերցնում է հեռախոսի լսափողը:

Տուր հիդրոկայան: Չի՞ պատասխանում:

ՍՈՒՐԵՆ

Կողմ

Կարծես ուղղակի հենց նա յե խոսում:

Բայց կուսակցական: Այն ել դեռ Բազմից:

Անտոնը չգիտե ինչ անի. նյարդային կերպով նստում է առաջվա սեղո:

Իսկ դիրեկտորը ուշացավ կարծես:

ԱՆՏՈՆ

Կողմ

Արդեն մոլորվեց, ել չի հարցնի:

ՍՈՒՐԵՆ

Կարծեմ վաղուց եք այստեղ աշխատում:

ԱՆՏՈՆ

Միայն մի ամիս: Յերկար տարիներ
Գործել եմ Բազմում իբրև ինժեներ:

Կողմ

Ախ, յերբ պիտի յես այստեղից դուրս գամ:

ՍՈՒՐԵՆ

Այո, դիրեկտորն ուշացավ իրոք:

Կողմ

Վարդանը սակայն շատ լավ կիմանա:

Այո, հենց նրա զինվորըն էր նա:

Ներս է մտնում դիրեկտորը ԵՏԱՅ

ԴԻՐԵԿՏՈՐ

Շատ ներողություն մի քիչ ուշացա:

ՍՈՒՐԵՆ

Իսկ յես կարծեցի թե մեզ մոռացար:

ԴԻՐԵԿՏՈՐ

ՍՈՒՐԵՆ

Համեցեք, խնդրեմ, նստեք սկսենք:

Ընկեր Սաֆարյան, ապա առաջ մեզ,

Դեռ չերկամր պետք է մարի լույսն այսպես:

ԱՆՏՈՆ

Յես ել իսկապես շատ եմ ամաչում,

Վոր լույսերն այսպես հաճախ են հանգչում:

Կարող եմ բան պատահել ե իրոք,
Հանքերը մնան անել ու անող...
Սակայն այսպես ե...

Դեսում լավում ե Արամի աղաղակը

ԱՐԱՄ

Այո, հիշեցի, հիշեցի յես քեզ...
Թողեք, ասում եմ, բաց թողեք ինձ ներս...

ԴԻՐԵԿՏՈՐ

Ի՛նչ ե պատահել, ի՛նչ աղմուկ ե դա:

ԱՐԱՄ

Ընկեր ղերեկաոր, չեն թողնում ներս գամ:

Դուռն աղմուկով բաց ե անում, յեվ ներս ե ընկնում Արամը հեվա-
լով: Նրան հետևում եմ մի խումբ բանվորներ. Արամը նկատելով
Աճճճճճճ

Ա՛, դու այսօր ես, յեկա ասելու,
Վոր հիշեցի քեզ, այ դու սրիկա...
Ընկեր ղերեկաոր, նախեցեք սրան,
Սա դաշնակցական սպա յեր դաժան...

ՍՈՒՐԵՆ

Հանկարծակի յեկած, կողմ

Սպան եր դաժան, չեմ սխալվել յես:

ԱՆՏՈՆ

Սուտ ե այդ, սուտ ե, հնարում ե նա...

ԴԻՐԵԿՏՈՐ

Հանդարտվել, աղաս, ի՛նչ ե պատահել...

ԱՐԱՄ

Իսկույն բոլորը կպատմեմ ձեզ յես...

ՍՈՒՐԵՆ

ԻճԳԻՐԵՆ ԵԻՐՈՂՈՐՈՆԵՆԵՐԻ մեջ ընկած

Նա քաշ տվեց ինձ, հիվանդ, վիրավոր...

ԱՐԱՄ

Յես մանուկ եյի մեր գյուղում ավեր,
Սոված ու տկլոր, մայրիկիս կողքին,
Մայրս հուսահատ չեփում եր քարեր,
Հույս եր տալիս, թե ճաշ կա կրակին:

ՍՈՒՐԵՆ

ԻճԳԻՐԵՆ

Ինչպես խեղճ կինս իմ յերեխային:

ԱՐԱՄ

Վորպեսզի քիչ ել, քիչ ել համբերեմ
Ու մորս առաջ քաղցից չմարեմ:

ՍՈՒՐԵՆ

ԻճԳԻՐԵՆ

Բայց իմ յերեխան մահացավ քաղցից:

ԱՐԱՄ

Հալրս ճակատից՝ խփված յեկավ տուն

Վերջին խոսքերի վրա Սուրենը զգաստանում ե յեվ ամբողջովին
կլանված լսում ե Արամին

ՍՈՒՐԵՆ

Յեկավ տուն, հետո՞

ԱՐԱՄ

Յեկավ և անուժ ընկավ անկողին:

ՍՈՒՐԵՆ

Հետո՞...

ԱՐԱՄ

Մայրս լալիս եր գիշերներն անքուն,
Գրկած ինձ միակ իր սոված տղին:

ՍՈՒՐԵՆ

ԻճԲԻՐԵՆ

Յես կը խենթանամ, կցնդեմ հիմա:

ԱՐԱՄ

Յեվ յեկավ ահա այս ստոր սպան:

ԱՆՏՈՆ

Սուտ և ասում եմ, այդ յես չեմ յեղել...

ԱՐԱՄ

Դա՛ռ տվեց հորս ու տարավ նրան:

ՍՈՒՐԵՆ

Հետո՞...

ԱՐԱՄ

Հետո սպանեց և իմ մայրիկին,
Յեվ ինձ թողեց վորբ, վորբ ու անպաշտպան:

ԱՆՏՈՆ

Ստիր, բայց վոչ վոք քեզ չի հավատա:

ՍՈՒՐԵՆ

Ամբողջովին հայացր նրան մեխած, գոռում ե

Հետո՞...

Արամը ապեւած նայում ե Սուրենին, մի պահ լուռնում ե սիրում

ԱՐԱՄ

Շվարած

Հետո... ել վոչինչ...

ՍՈՒՐԵՆ

Արամ, զավակս...

ԱՐԱՄ

Դժու... չեմ հասկանում...

ձանաչում ե

Ախ, հայրիկ, հայրիկ...

Գրկախառնվում յեվ յերկար համբուրվում են: Այդ մոմենտից ոգսվելով Անտոն ուզում ե փախչել, բայց դռների մոտ հանդիպում ե Մուսեղին, վոն ասեմանակը ձեռին, Սերոբին առաջը գցած բեմ ե մեցում

ՄՈՒՇԵՂ

Կաց, ուր ես փախչում: Յեւ վերադարձիր:

Անտոնը յես ե գալիս

Հանքում լույսերը մարեցին ելի,
Լիֆթը կանգ առավ. յերկու մարդ մեռան.
Հանքերը բոլոր կորել են մթում,

Վոչ վոք սարսափից շախտը չի մտնում:
Իսկ այս բոլորի հերոսը ահա,
Բռնել բերել եմ էս ինձ հետ նրան:

ՍՈՒՐԵՆ

Սերոբից

Յեվ դո՛ւ յես այստեղ, լրտես սրիկա...

ԴԻՐԵԿՏՈՐ

Սերոբից

Դե, խոսիր, սաս, ձեզացիր անձեղ...

ՍԵՐՈՐ

Յույց ե՛ տալիս Անտոնից

Հրամանատարս կանգնած ե՛ այստեղ:

Նես ե՛ մեկում Վարդանը

ՎԱՐԴԱՆ

Զարմացած

Սուրեն, այս ինչ ե՛ յեղել, սաս մի:

ՍՈՒՐԵՆ

Լավ յեկար, Վարդան, մի պատվի բռնիր,

Յույց ե՛ տալիս Անտոնից

ՎԱՐԴԱՆ

Ինչպես ե՛ յեկել ու այստեղ թառել,
Յես կարծում ե՛լի վաղուց ե՛ մեռել:

ՍՈՒՐԵՆ

Փոխել ե՛ միայն աղջն ու անունը,
Բայց դեռ ի՞ր հոգով մնում ե՛ նույնը:
Իսկ սա՛. լավ նայիր. սրան չէս հիշում...

Յույց ե՛ տալիս Սերոբից

ՎԱՐԴԱՆ

Ինչպես չհիշեմ:

Սերոբից

Այ՛ դու լրտես շուն...

ՍՈՒՐԵՆ

Իսկ սա ի՞մ վորդին, հիշե՞մ ես սրան:

ՎԱՐԴԱՆ

Զարմացած

Նա՛ յե, վոր մնաց վորք ու անպաշտպան:

ՍՈՒՐԵՆ

Անտոնից

Իսկ դու կո՞վդ ես շարունակում ելի,
Դու դեռ չէս դրել քո զենքերը վար,
Յես ափսոսում եմ միայն մի բանի,
Վոր վիշտ ե՛ դարձել այժմ ինձ համար,
Այդ այն ե՛, վոր յես թույլ տվի ելի,
Վոր այսքան տարի ապրես ավելի:

Մթնում ե՛

Գ. ՊԱՏԿԵՐ

ԴԻՔՏՈՐ

Իսկ այն ավեր, խավար գյուղին,
Ուր աիրում եր վողը ու լաց,
Ուր շրջում եր մահը դեղին,
Իջավ պայծառ լուսաբաց:
Ու փայլ առան հանդ ու արոտ.
Կանաչներով լցվեցին,
Մկկացին ջրերի մոտ,
Հոտ ու գառներ նորածին:
Լուսավորվեց գյուղը խավար,
Սրտերն ուրախ ցնծացին,
Համայնական կյանքի համար,
Խնդաց լերկրի գյուղացին:
Անհետացան և սով և քաղց,
Յեղավ խաղաղ վար ու ցանք,
Յեղ գյուղացիք լի, սրտաբաց:
Բերքի լեռներ ստացան:
Ու այն խոպան դաշտերում հին,

Ուր կարեքն եր շրջում մերկ,
Համայնացման կյանքի ուղին
Փռել ե վառ բերք ու չերգ:
Այնտեղ հասկերը վոսկեվարս,
Այգիները խաղողի,
Ուր վողկույղները վոսկեվաղ,
Սպասում են քաղողի:
Իսկ թող ձեր դեմ բացվի լուսե
Բամբակի դաշտն ըսպիտակ,⁹
Այդ կոլեկտիվ ձեռքն ե հյուսել,
Ու քաղում ե չերգի տակ:

Վարագույր բարձրանում ե: Բամբակի դաշտ: Մի խումբ կանայք
կարմիր գլխափառներ կապած բամբակ են հավաքում: Մեջքերում
նստած ե կույր ծերունիներ, վարից օրջապատել են 5 — 6 յերեխաներ:
Ծերունիներ զբաղեցնում ե նրանց: Բամբակ հավաքող կանայք ու
աղջիկները յերգում են

ԿԱՆԱԿ

Թվանգը առավ զնաց,
Յետ նալեց, դառավ զնաց,
Գնացած ճամբին մեռնեմ,
Կովի մեջ սառավ մնաց:

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Բռնում ե իր ձախ բռունցքը մասնորով, մի յերեխա նույնպես
բռնում ե նրա բռունցքը

Ծիվ անեմ, ծիվ-ծիվ անեմ,
Թուցնեմ դառնա թռչնակ,
Թռչնակին ծուլ-ծուլ անեմ

Վար իջնի մի սալառնակ,
Վրան քեզ նստեցնեմ,
Այ տղա, սիրուն Յուլակ,
Դու դառնաս մի ողաչու,
Ու հայդե, չո՛ւ...

Յերեխաներն ուրախանում, աղմկում են

ՅԵՐԵՆԱՆԵՐ

- Պապի ինձ...
- Պապի ինձ...
- Ինձ...
- Ինձ...

ԿԱՆԱՅՔ

Եղ ճամբով արուն յեկավ,
Նոր կյանքի գարուն յեկավ,
Զուրկ ու մուրկ մարդկանց բախտի
Գըլգըլան առուն յեկավ:

ԿՈՒՅՐ ԾԵՐՁՈՒՆԻ

Մի ուրիշ յերեսայի հետ

Ծիւղ անեմ, ծիւղ-ծիւղ անեմ,
Թոցընեմ դառնա պախրա,
Պախրային ծուլ-ծուլ անեմ,
Դառնա ձի ճամբի վրա.
Զիուն քեզ նստեցնեմ,
Այ տղա, սիրուն Աբբաս
Զիավոր դառնաս արի,
Դե հայդե, ճամբադ բարի:

ՅԵՐԵՆԱՆԵՐ

- Պապի ինձ...
- Պապի ինձ...
- Ինձ...
- Ինձ...

ԿԱՆԱՅՔ

Ախ, եղպես արեւ յեկավ,
Կարեց սար քարեր յեկավ,
Մի շողք ել մեր յերթիկից,
Վոնց ախպոր բարեւ յեկավ:

ՄԻ ՏՂԱ

Հեռվից

Մանաս պապի, նամակ... նամակ...

ԿՈՒՅՐ ԾԵՐՁՈՒՆԻ

Նամակ... ի՞նձ նամակ, մոռացված մարդո՞ւն,
Ո՞վ, ով ե գրում, ով ե հիշում ինձ,
Կույր ծերունին վոչ վոք չունի աշխարհում,
Կույր ծերունին չունի վոչ մի մերձակից:

Վագելով ներս ե մտնում մի տղա, նրան հետևում են մի խումբ
ջահելներ, յեւ օրջ ապաստում կույր ծերունուն: Կանայք նույնպես
հավաքվում են

ՄԻ ՏՂԱ

Այ, պապի, նամակ, այ, քեզ են գրել...

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

պարխափելով, դողդողջուն ձեռքեր ողի մեջ տարածած հազիվ
բռնում է նամակը յեկ շոշափում

Նամակ... հա՛ նամակ... այս լճնձ են գրել...
Հեռավոր տեղից...

ՄԻ ՏՂԱ

Այո, քեզ, պապի:

ՁԱՅՆԵՐ

- Աչքդ լույս լինի, այ Մանաս պապի:
- Այ Մանաս քիրվա, աչքդ լույս լինի...
- Մանաս պապի, քեզ այդ ով է գրել...

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Դողդողջուն ձեռքով մեկնում է նամակը յերեսասարդին, վերջինս
վերցնում է

Դե առ, առ կարդա, առ կարդա, վորդիս...

Մինչ նամակ բանալը ծերունին ինքնին

Յերկու վորդի ունեյի թե՛լ առան թռան,
Նրանց յես իմ ձեռքերով գրի գերեզման:

ԹՈՒՐԳ ԿԻՆ

Խեղճ Մանաս քիրվա...

ՄԻ ՏՂԱ

Դիտես ինչ, պապի, Արամն է գրել...

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Արամը... այդ նա, մեռնեմ արեվին...
Դե, կարդա, վորդի, կարդա իմանամ...

ՄԻ ՏՂԱ

Կարդում է

Իմ սիրելի պապի, գրում եմ քեզ նամակ,
Յե՛վ սիրտս ուբախ է, և լավ եմ յես,
Քեզ հե՛մ տեսել վաղուց, ախ, յերկաբ ժամանակ,
Ու կարոտել եմ յես քեզ այնպես...

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Ապրում է նամակի յուրաքանչյուր բառով

Վայ, արեվիդ մեռնեմ, լոյիդ մեռնեմ, բախ...

ՄԻ ՏՂԱ

Շարունակում է

Յե՛վ այն ել իմացիր, վոր չեղել եմ գործի,
Բանվոր եմ հիմա չես հանքերում,
Յե՛վ այն ել իմացիր, վոր շախտը պղնձի,
Գտնվում է գետնի շատ խորքերում...

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Հուզված

Հա, կարդա, վորդի... Ախ, մեռնեմ նրան...

ՄԻ ՏՂԱ

Շարունակում է

Յե՛վ այն ել իմացիր, գտա իմ հայրիկին...
Ու գյուղ կգամ շուտով, կտանեմ քեզ,

Իմ սիրելի պապի, քեզ հետ կապրենք կարգին,
Տեսնում ես ինչ որ լուսացավ մեզ...

ԿՈՒՅՐ ԾԵՐՈՒՆԻ

Ուրախ հուզմունքով

Վոչ, ել մի կարգա, մի կարգա, վորդի,
Յես կխենթանամ... կխենթանամ յես:

Լաց ե լինում

Կույր ծերունին լաց ե լինում...
Ուրախության արցունք ե թափում կույր ծերունին...
Կույր ծերունին տեսնում ե արեվը,
Արեվը ե տեսնում կույր ծերունին,
Իր արցունքների միջից...

Վ Ե Ր Զ



<< Ազգային գրադարան



NL0365433

53878

138

ԳԻՆԸ 2 Ռ.